



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԱՐՇԱԼՈՒՅՍ

1917

№ 1

ՔԻՓԼԻԿ



32891.99-82 "հնչակ" - Ի խորհրդի (86)

Խմբագրություն

Գ. ՏԱՐԻ

Գ. ՏԱՐԻ



# ԱՐՁԱՆՈՅՍ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ և ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՂՄԱՆԱԽ

№ 1 \_\_\_\_\_ 1917

Խմբագրություն

Ա. Մելիքումեանի, Ե. Սաղոյեանի

~~891.99-82~~  
~~Ա-82~~

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- |    |   |                        |
|----|---|------------------------|
| 1  | Նահատակներին (բան)                              | Գազիկ Մխիթարեան        |
| 2  | Զը գիտեմ ինչու (բան.)                           | Եթիմ                   |
| 3  | Նոր կեանք                                       | » . . . . .            |
| 4  | *   | » . . . . .            |
|    | **  | » . . . . .            |
| 5  | Անհունում                                       | » . . . . .            |
| 6  | Սիրածօն   | » . . . . .            |
| 7  | Հրաժեշտ   | » . . . . .            |
| 8  | Ինչ կանէ թշուառ                                 | » . . . . .            |
| 9  | Մինիօն (բան.)                                   | » . . . . .            |
| 10 | * (արձ. բան.)                                   | » . . . . .            |
|    | **  | » . . . . .            |
| 11 | Ապուլլոնի երկրպագուները (վոզընիլ)               | Ե. Սաղոյեան            |
| 12 | Մենութեան երգը (արձ. բան.)                      | Լևոն-Լևոնի             |
| 13 | Վերջին նամակներս (արձակ)                        | Ն. Սևադա               |
| 14 | Պշիբըշևսկու արձ. բանաստեղծութ.                  | Պետրոս                 |
| 15 | Համաշխարհականութիւնը հայ գր-<br>րականութեան մէջ | » . . . . . Վ. Գարսեան |
| 16 | Ստացած գրքեր                                    |                        |

W 328

891.99-82

Ա-92

պ

# ԱՐՇԱԼՈՅՍ

Պրական, Պ եղարուեսական  
և ֆննադասական

ԱՂՄԱՆԱԽ

Գիրք I.

Խմբագրութեամբ

Ա. Մելումեանի և


Ե. Սաղոյեանի

Թիֆլիս

Տպ. «Պրոգրէս» Լորիս-Մելիք. 1.

1917

1002  
7441



(4566)

6904-ckh

## ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ես չեմ հիւսի ձեզ արցունքներ՝  
Իմ երգերից տխրագին,  
Նահատակուած սուրբ եղբայրներ,  
Փառք ձեզ, ձեր սուրբ աճիւնին...

Երբ գարուն գայ մեղմ հովերով,  
Ծաղկափթիթ ժպտադէմ,  
Կգամ այցի ձեր շիրմի քով,  
Ծունր դրած կաղօթեմ...

Ես չեմ սրգայ... այլ կերգեմ  
Ազատութեան երգը ձեր՝  
Որ մինչև մահ դուք ժպտադէմ  
Կերգէիք անվեհեր...

Որ մինչև մահ դուք անբաժան,  
Սէրը գրկած հայրենի,  
Գտաք կեանքին ձեր հանգրուան՝  
Գնով փառքի, արիւնի...

Հպարտ հոգին ձեր քաջարի՝  
Օ... չի սիրում վիշտ ու լաց,  
Թող լարերը իմ քնարի  
Հնչեն երգեր վեհ, անլաց:

Ես չեմ հիւսի ձեզ արցունքներ՝  
Իմ երգերից տխրագին,  
Որ չտխրի, ո՛վ հերոսներ,  
Զվշտանայ ձեր հոգին...

Գ. Մխիթարեան

## ՉԸ ԳԻՏԵՄ ԻՆՉՈՒ

Չը գիտեմ ինչո՞ւ

Ոսկի՛ օրերի, արծաթ՛ յուշերի

Կախարդ երգերը էլ չեն թրթռում

Հոգուս եթերում:

Շուրջս ծիծաղ է, շուրջս պար, խնջո՞ք,

Բայց իմ հէգ հոգու անյատակ ծովում

Չը գիտեմ ինչո՞ւ

Մըրիկ է, ցասում...

Չը գիտեմ ինչո՞ւ

Երանգ ձգտումի նոր ապրումների

Վե՛հ կարաւանը էլ չէ զնգզնդում

Սրտիս ոլորտում:

Շուրջս յարատև

Գարնան է, արև...

Բայց սրտիս խորքում

Չը գիտեմ ինչո՞ւ

Ծլում են, փթթում

Մթնշաղ, աշուն...

Չը գիտեմ ինչո՞ւ

Իմ փէրին սիրուն,

Իմ փէրին ալ-վարդ,

Աչերով կախարդ

Իմ սրտի նիւրհը վրդովեց վեր, վար,

Դիւթեց դժբախտիս, հիւծեց չարաչար...

Եւ որպէս ուրու՝

Չքացաւ հեռում... ,

Նետեց դէպի ինձ

Յար անմահ, աննիւջ

Ծանր ու քրքի՛ջ...

Եւ էն օրից մինչ էսօր,

Թախիծն առած իմ ընկեր՝

Թափառում եմ սար ու ձոր,

Անլոյս, անյոյս և անսէր...

Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ,  
 էն սև՝ օրից սիրեցի յար  
 Անասպատը հողմահար...  
 Օրօրը դիւթական  
 Յաւէրժ Մենութեան...  
 Թախծոս ուռու  
 Մեղեղին  
 Նրբին...  
 Եւ՝  
 Փրփուր ծովի լաց ու կական...  
 Հին, մամռազարդ շիրիմների  
 Հէքիաթներն այլազան,  
 Փոթորիկը մահասփիւռ,  
 Դալուկ լուսնի սուգը լճու,  
 Բուերի գիշերուայ  
 Սև՝ մաղթանքն անմահ,  
 Վերջալուսի  
 Մահաներկ  
 Հև՝քը  
 Հէգ...

Շուշի

Եթիմ



## ՆՈՐ ԿԵԱՆՔ

Նորից գարնան բոյր են շնչում,  
 Նորից բերկրանք ու սէր տենչում.  
 Կեանք ու ժպիտ, սէր ու արև  
 Շողշողացին սրտիս վերև.

Սիրտս խնդաց,  
 Կեանքով լցուած՝  
 Ճախրեց հեռուն  
 Թևատարած:

Աշխարհն՝ անուրջ, կեանքը՝ երազ,  
 Հոգիս գրկեց խորհուրդն անհաս...  
 Ու ես կապրեմ, ես կերազեմ,  
 Իսկ աստղերի շողն աննսեմ

Կը թրթռայ  
 Սրտիս վրայ,  
 Մինչև հասնի  
 Մահը նրա...



\* \* \*

Փնտրում է հոգիս՝ թևերը փռած,  
 Աստղերի ուղին թռչում է փութով.  
 Եւ սրտիս պայծառ ջահերը վառած՝  
 Փնտրում է մէկին անհուն կարօտով:

Լուսեղէն էակ՝ հմայքի աղբիւր,  
 Զուգուած աստղերի շողուն պսակով,  
 Հեզաշունչ ծաղիկ՝ այնքան քաղցրաբոյր,  
 Դիւթել է հոգիս անուշ թովչանքով:

Եւ զօր ու գիշեր փնտրում է նրան՝  
 Ծարաւը խեղդած որոնող սրտում.  
 Փնտրում է հոգիս այնոյս, անորրան,  
 Մարում է ջահերն ու լալիս տրտում...

Էջմիածին

Յար. Պետրոսեան



## Ա Ն Հ Ո Ի Ն Ո Ի Մ

Հեռու, շատ հեռու, անտես վայրերից,  
 Խրոխտ և հպարտ—սէզ լեռան գլխին,  
 Ծաղկունքով պատած հսկայ ամբոցից  
 Դուրս եկաւ գիշերը սև քօղի տակին:

Գունատ և դողդոջ նա առաջ անցաւ  
 Դաշտ, լեռ, ձոր, անտառ՝ սև քօղը գլխին  
 Եւ ամբողջ ճամբին ոչ ոք իմացաւ  
 Երկնային դստեր վեհ սիրահարին:

Առաջ է գնում դողդոջ քայլերով  
 Գիշերը մռայլ լուռ և համրացած,  
 Անյագ վայելքի բուռն տենչանքով,  
 Ոսկեշող փերու յորդ սիրով լցուած:

Առաջ է սլանում Արեգի պրկում  
 Անվերջ ապրելու, նրան շնչելու  
 Եւ աստուճածային վսեմ անկողնում  
 Անզուսպ տենչանքին յագեցում տալու...

Բայց նա չի ուզում իր երջանկութեան,  
 Վսեմ վայելքին անել մասնակից  
 Ոչ մի էակի, բաց իրեն միայն  
 Նա վախենում է երկրի էակից:

Եւ ամեն ինչից, անգամ և ծաղկից  
 Անհաս գաղտնիքը ծածկելու համար,  
 Աշխարհի վրայ բոլոր ծայրերից  
 Սև քօղի նման ձգում է խաւար...

Եւ այսպէս անվերջ, լցուած յորդ սիրով,  
 Գիշերն հեալէն փերուն է ձգտում,  
 Երկրին քօղ ձգում դողդոջ ձեռքերով՝  
 Երկինք ու երկիր մէկ-մէկից զատում:

Էմիլիա Նազարեանց

## ՍԻՐԱԶՕՆ

ՕՐ. ԱՐՈՒՍԵԱԿ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ

Ողջո՞յն, ողջո՞յն ո՞վ իմ չքնաղ գեղուհիս,  
Բուրաստանի պերճանքն ու գեղը գոհար,  
Կը հրդեհուի հոգիս բոցովդ հըրավառ,  
Ողջո՞յն, ողջո՞յն գեղուհիս:

Կապոյտին մէջ իմ հոգիին կը պսպղայ  
Աստղ մը պայծանձ, աչքերն արև՛, վարսերն հո՛ւր  
Այն Քու պատկերն է գեղանուրբ ու մաքուր  
Կապոյտին մէջ իմ հոգիին դիւթահմայ:


Ո՛, գարունի թարմ թովչանք մը կը թորի  
Խնձո՞ր, ծիրանն, վարդակարմիր այտերէդ,  
Մարմար լանջքէդ ու ծիծեռնակ ծիծերէդ  
Ո՛, գարունի ծոթրին բոյրը կը ծորի:

Աննիւթական բազինն ես դու իմ սէրին,  
Կը պաշտեմ Քեզ, կ'երկրպագեմ զերդ կուռքի,  
Տարաշխարհիկ անուրջներու Դիցուհի,  
Աննիւթական բազինն ես դու իմ սէրին...

Երթանք, երթանք բախել սիրոյ սուրբ Սեմին.  
Երթանք հիւսել սիրոյ մեր բոյնն հոյաշէն,  
Աշխարհն արար թող սարսըռայ մեր Սէրեն.  
Երթանք հուրիս, երթանք սիրոյ նոր Սեմին...

Դիլիջան

Վ. Գարահան



## ՀՐԱԺԵՇՏ

or. X-ին

Անջատուում եմ լուռ վաղաժամ  
Ծաղկի նման

Ու չգիտեմ մինչև երբ...

Քո սլաակերը չքնադադեմ,  
Որպես եղեմ,

Արտիս միջին կասրի հէգ

Իմ սև հոգին անփառունակ,  
Կրակի ճարակ,

Հուր կարօտից կը վառուի

Մինչ ցանկալի նոր վերադարձ,  
Երբ կարօտած

Մենք կը վարուենք սիրալի:

Ս. Գալաչեան



## Ի՞նչ ԿԱՆԷ ԹՇՈՒԱՌ

Գերեզմանային սառնութիւն բուրոյ,  
 Ձիւնի ցուրտ պատանք ծածկած է չորս դին:  
 Մեռած է բնութիւն: Մինչ մըրբիկ կծող՝  
 Դիւային պարով կսանայ մուկգին,  
     Ի՞նչ կանէ թշուառ  
     Անյոյս, դողահար...

Մինչ սալոնին մէջ, լուսավան, մաքուր  
 Գիւլ-գիւլ կը խօսի տաքուկ վառարան.  
 Եւ հարուստն արբած ցնորքներով բիւր,  
 Անհոգ կերազէ թարմ հաճոյք անխառն.  
     Ի՞նչ խորհի թշուառ  
     Մերկ ու դողահար...

Սեղանին վրայ լիք համադամով՝  
 Մինչ քրքիջ շրջի անզուսպ եռանդով:  
 Եւ մինչ դաշնակի անմահ թրթռումներն՝  
 Դրախտի մթնոլորդ կուզան ստեղծել,  
     Ի՞նչ կանէ թշուառ  
     Նօթի, դողահար...

Հոն՝ թօլ պար ու երգ, հոս՝ մրկող հառաչ...  
 Հոն՝ արծաթ քրքիչ, հոս՝ հեկեկանք, լաց...  
 Հոն՝ ելեքտրիկ լոյսերու փայլ, փառք,  
 Հսս արկայծ կանթեղն ընկիր հոգեվարք...  
     Ի՞նչ անէ թշուառ  
     Լքումձ, դողահար...

## ՄԻՆԻՕՆ

Դու տեսե՞լ ես այն երկիրն, ուր կիտրօններն են ծաղկում,  
 Մութ սաղարթում ոսկեղէն նարինջները հուրհրատում.  
 Կապոյտ երկնից մի հանդարտ, հանդարտ հով է սուրում ցած,  
 Որտեղ գոռոզ դափնենին ու մրտենին են կանգնած.  
 Դու տեսե՞լ ես այն երկիրն, ասա՛, այնտեղ, օ այնտեղ  
 Կուզեմ քեզ հետ սլանալ, իմ սիրելի, միատեղ:

Դու տեսե՞լ ես այն տունը իր տանիքով ամրասիւն,  
 Ուր փայլում են դահլիճներն և զարդերը պսպղուն.  
 Կոթողները մարմարէ լուռ նայում են ինձ վրայ.  
 «Ի՞նչ օրի ես հասել դու, խեղճ նազելի երեխայ»:  
 Դու տեսե՞լ ես այն տունը, ասա՛, այնտեղ, օ այնտեղ,  
 Իմ պաշտելի, ես կուզեմ թռչել քեզ հետ միատեղ:

Դու տեսե՞լ ես այն սարը և արահետն ընդամպեան,  
 Ուր եղջերուն մէզի մէջ որոնում է իր ճամփան,  
 Անձաւներում իժերի հին սերունդն է բնակում  
 Եւ իջնելով ժայռից ցած, ջուրն է վշշում, աղմկում:  
 Դու տեսե՞լ ես այն սարը, ասա՛, այնտեղ, օ այնտեղ  
 Եկ միասին, օ հայր իմ, թռչենք գնանք միատեղ:

Թարգ. Համբ. Մաղմանեան



\* \* \*

Նստած լեռան լանջին թաւուտի մէջ լսում էի գետի քաղ-  
ցրահնչիւն ելեէջները, ծաղիկների մեղմ փափսիւնը, թռչունների  
անուշ դայլայլը և զմայլում....

Ամեն ինչ կատարեալ էր շուրջս աստուածացած... Լուսինն  
իր անբաժան ընկեր՝ Աստղիկի հետ օրօր ու շօրօր առաջ էլ լո-  
ղում, երկնային կեանքը դիտելով և նրա գաղտնիք՝ համաշխար-  
յին վիշտն ու երջանկութիւնն ուսումնասիրում...

Շուրջս համատարած թւերով անդորրութիւնն էր իշխում...  
բնութիւնը տիեզերական մեծ-սիրոյ երգն էր երգում... Ես մենակ  
էի, ես մի հսկայ վիշտ էի երջանկութեան ծովում...

Ներսս ինչ որ շարժուեց, գալարուեց և անխնայօրէն սկսեց  
կրծել հոգիս...

Ծաղիկների անուշահոտ բոյրից, սիրոյ հիասքանչ փափսու-  
կից արթնացաւ նախանձը և փոթորկեց հոգիս...

Մի անդուսպ տենչ զգացի ոչնչացնելու շուրջս ամեն ինչ,  
չբացնելու տիրող երջանկութիւնը...

Մի քանի բոպէ անց՝ ձեռքիս մի ահագին ծաղկեփունջ ու-  
նէի... ես մեռցրել էի հազարաւոր կեանք....:

Բայց շուրջս դարձեալ երջանկութիւնն էր իշխում, սէրը՝  
դողանջում և հոգիս փոթորկում...

Փայռ



# ԱՊՈԼԼՈՆԻ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ

Վոդրեիլ մէկ գործողութեամբ

Ե. Սաղոյեանի

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Մայիլեան, վիպասան, 60 տար.

Վարդգէս, նրա եղբորորդին, 26 տար.

Դդում, անասնավաճառ, 52 տար.

Աստղիկ, նրա աղջիկը, 19 տար.

Կարինեան, պառաւ աղջիկ, 38 տ.

Ջալալ, Մայիլեանի ծառան:

---

Բեմը ներկայացնում է Մայիլեանի գրասենեակը: Կահաւորութիւնը միջակ է. Աջ և ձախ կողմից դռներ, երկու պատուհան, գրասեղան, որի վրայ անկանոն կերպով թափուած են թղթեր, գրքեր և այլն... Պատի վրայ կախուած է Մայիլեանի նկարը: Առաւօտ է: Վարագոյրը բարձրանալու ժամանակ բեմի յետևից լսվում է զանգի ձայնը:

Տեսիլ I

## Դդումը մեկակ

ԴԴՈՒՄ. (փայտը ձեռքին ներս է մտնում) Էս ի՞նչ աւազակութիւն է. ոչ ոք չի երևում: Չանգահարում եմ, հա՛ զանգահարում, ասա՛ մի շան լակոտ դ՞ուրս ա գալիս, որ դուռը բաց անի, մի կողմից: Չարմանալի է... է. ոչ ոք չկայ այստեղ (ներս է մտնում Ջալալը):

## Տեսիլ II

## Դրում եւ Ձայլալ

ԴԴՈՒՄ. Վերջապէս մէկը երևաց:

ՁԱԼԱԼ. Ի՞նչ էք կամենում:

ԴԴՈՒՄ. Պ. Մայիլեանը այստեղ է ապրում:

ՁԱԼԱԼ. Այո՛, այստեղ:

ԴԴՈՒՄ. Տանն է:

ՁԱԼԱԼ. Այո՛:

ԴԴՈՒՄ. Շատ լաւ: Կանչի էստեղ (նստում է աթոռի վրայ):

ՁԱԼԱԼ (ուզում է աթոռ առաջարկել). Խնդրեմ...

ԴԴՈՒՄ. Ի՞նչ:

ՁԱԼԱԼ. Ես ուզում էի Ձեզ աթոռ տալ:

ԴԴՈՒՄ. Տ՛ուր. այդ չի խանդարիլ. երկուսի վրայ կնստեմ, մի կողմից (նստում է երկու աթոռի վրայ): Իսկ հիմա, կանչի էստեղ էդ գրողին: (Հանում է գրպանից լրագիրը):

ՁԱԼԱԼ (ինքն իրեն). Մի սրան տես. այնպէս հատեց, կարծես իրանց տանը լինի:

ԴԴՈՒՄ (կարդում է). «Գանձակում մօտիկ ժամանակներս ոչխարների մեծ առուտուր էր»... Յիմար եմ եղել, մի կողմից. ինչո՞ւ էստեղ չգնացի, երևի կաշխատէի (նստում է չորս կողմը): Ի՞նչ էլի շան նման կանգնած ես: Չլսեցիր, որ ես քեզ հրամայեցի: Ես սպասելու ժամանակ չունեմ:

ՁԱԼԱԼ. Մենք էլ ժամանակ չունենք, նամանաւանդ այն պարօնների համար, որոնց չենք ճանաչում:

ԴԴՈՒՄ. Դէ, շատ մի հաջի, գնան, ասան գրողին, որ եկել է Վարդան Դրումեանցը, անասնավաճառը:

ՁԱԼԱԼ (ժպտալով) Հա՛...:

ԴԴՈՒՄ. Ի՞նչ է նշանակում՝ «հա՛»:

ՁԱԼԱԼ. Երևի դուք եկել էք անուանակոչութեան համար ոտանաւորներ պատուիրելու: Մենք այդ կարող ենք անել:

ԴԴՈՒՄ. Յիմար, շատ մի հաջի, արան, ինչ որ քեզ հրամայում են... Համբերութիւնս հատնում է:

ՁԱԼԱԼ. Գրողը ընդունում է 12-ից մինչև 2-ը:

ԴԴՈՒՄ. «12-ից մինչև 2-ը», չէ, չեմ կարող, էդ ժամանակին ես դատաւորի մօտ պէտք է լինեմ, իմ ծառայի դուրսը կոտրելու համար էս փէտով (ցոյց է տալիս) մի կողմից, հասկացար:

ՁԱԼԱԼ. Հասկանում եմ:

ԴԴՈՒՄ. Դէհ, գնահ և կանչիր նրան:

ՁԱԼԱԼ. Կանչիլ չի լինի, նա հիմա աշխատում է:

ԴԴՈՒՄ. Աշխատում է: Ի՞նչ աշխատանք կարող է լինել խելքին զօր տուած բաներ խզրշտելը, որ վերջը կրակ պէտք է ածի, կամ... (այս խօսքերի ժամանակ վեր է կենում աթոռից, շրջում է սենեակում, ապա կանգնում է Մայիլեանի լուսանկարի առաջ: էս սով է:

ՁԱԼԱԼ. Գրողը:

ԴԴՈՒՄ. Ի՞նչ, սա նա է, Մայիլեանը:

ՁԱԼԱԼ. Այո:

ԴԴՈՒՄ. Հա՛, հա՛, հա՛... Գէլի փայ դառնայ: Ուրեմն պառաւ է, հա՛, մի կողմից, Դէ, եղբայր, դու չես կարող հաւատալ, թէ ինձ ինչքան ուրախացրիր: Ես չեմ կարող համբերել, մինչև որ նրան չհամբուրեմ, մի կողմից (համբուրում է Մայիլեանի լուսանկարը):

ՁԱԼԱԼ (ինքն իրեն). էս ի՞նչ էր:

ԴԴՈՒՄ. Հիմի էլ չեմ վախենում էս քաջալ գրողից (նայում է լուսանկարին): Ոչինչ, գեղեցիկ տղամարդ է, մի կողմից! էլ չի հարկաւոր նրան կանչելը. էս բոպէիս կուղարկեմ էստեղ իմ Աստղիկին, թող նա ինքը սրան տեսնի:

ՁԱԼԱԼ. Երևի Ձեր աղջիկը:

ԴԴՈՒՄ. Հա՛, իմ սեփական աղջիկը, մի կողմից. լուսնեակի պէս աղջիկ ա:

ՁԱԼԱԼ. Եթէ Ձեր նման է, երևի...

ԴԴՈՒՄ. Դուն, որ քիչ խօսես, լաւ կանես (շրջում է սենեակում)... «Նման է»: հէնց դրա մէջն է անբախտութիւնը, որ նման չի: Չափից դուրս շատ է կարգում էդ դահրումար վէպերը:

ՁԱԼԱԼ. Իմ կարծիքով, պարոն, ընթերցանութեամբ զբաղուելը շատ գեղեցիկ պարապմունք է, ես ինքս սիրում եմ վէպեր կարդալը... Իսկ Ձեր աղջիկը, երևի քաղաքավարի օրիորդ է... Ձեզ պէս հօ, ոչխարներ չի մոռթում:

ԴԴՈՒՄ. Լաւ է ոչխարներ մորթէր, քան քու գրողի վէպերը կարդար: Առաւօտեան, ճաշին, գիշերը, մի խօսքով՝ սաղ օրը լըսում եմ. «Ա՛խ, ի՞նչ լաւ է գրում Մայիլեանը: Ա՛խ, հայրիկ ի՞նչ գեղեցիկ է նկարագրում Մայիլեանը սիրահարներին բնութեան գրկում»: Գլուխս պտոյտ է գալիս էդ խօսքերից, մի կողմից: Ծանօթանալ էր ուզում սրա հետ... Հիմա էլ չեմ վախենում Մայիլեանից: Գնամ տուն և իրաւունք տամ, որ էստեղ գայ, ինքն անձամբ ծանօթանայ. խելքը գլուխը կգայ, երբ տեսնի իմ գեղեցիկ աղջկան, գլխից բոլոր յիմարութիւնները դուրս կթռչեն:

Երևակայիր՝ հրաժարուեց խողի դմակ ծախող վաճառականի հետ  
ամուսնանալուց, որին ես ուզում էի տալ: Ճարպիկ, առողջ, ե-  
ղան նման աշխատող տղայ... «Ձեռ ուզում» և ուրիշ ոչինչ: Ո-  
չինչ չես կարող անել, կամքին հակառակ չես կարող գնալ, մի  
կողմից... է՛հ, հերիք ա լոբի ցանեմ, գնամ կանչեմ, թող մի  
քիչ ուրախանայ, հա՛, հա՛, հա՛... (ծիծաղելով գնում է):

Տեսիլ III

Ջալալ եւ Մայիլեան



ՋԱԼԱԼ (աջ դռնից խօսում է). Գնաց:

ՄԱՅԻԼԵԱՆ (ներս մտնելով). Փնփռ Աստուծոյ: Իսկ ո՞ւր է  
կինս:

ՋԱԼԱԼ. Գնաց մօրաքրոջ տուն:

ՄԱՅԻԼԵԱՆ. Շատ լաւ, ուրեմն ես մի երկու ժամ ազատ  
կլինեմ, ոչ ոք ինձ չի խանգարի: Սքանչելի է:

ՋԱԼԱԼ (վերցնում է սեղանից նամակը և տալիս է Մայի-  
լեանին). Ձեր հասցէով է, պ. Մայիլեան:

ՄԱՅԻԼԵԱՆ (վերցնում է նամակը). Երևի մեր խմբագրիցն  
(կարդում է). «Սպասում եմ խոստացածդ վէպիկին»... Դէհ,  
հերիք է պարապ նստել, գործի դիմեմ: Գնա՛: (Ջալալը դուրս է  
գնում):

ՄԱՅԻԼԵԱՆ (նստում է սեղանի առաջ) Սպասում է վէպի-  
կին... Գլուխս բթացել է... է՛, էն ուրիշ ժամանակներ էին Օ,  
Մեծդ Ապոլլոն, Ֆանտազիա, յանդուզն Ֆանտազիա... Վէպեր,  
ոտանաւորներ, հէքիաթներ, ողբերգութիւններ... զրում էի մեքե-  
նայի պէս: Քանի մարդ եմ պսակել, բաժանել կամ սպանել...  
տաժանակիր աշխատանքի ուղարկել... Սակայն պէտք է գործի  
դիմել (գնում է: Ներս է մտնում Ջալալը):

ՋԱԼԱԼ. Պ. Մայիլեան:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ի՞նչ ես ուզում:

ՋԱԼԱԼ. Մի ինչ որ տիկին ցանկանում է Ձեզ տեսնել: Ազ-  
գը կարիներան է:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ինչպէ՛ս:

ՋԱԼԱԼ. Կարիներան:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ո՞վ է:

ՋԱԼԱԼ. Ասում է, որ Ձեզ հետ լուրջ գործ ունի:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ներս հրաւիրիր:

ՋԱԼԱԼ. Էս բոպէիս (դուրս է զնում):  
 ՄԱՅԻԼԵԱՆ. Ուղղակի պատիժ է, Էլի, այցելութեան ժա-  
 մանակ են գտել:

## Տեսիլ VI

## Մայիլեան եւ օր. Կարինեան

ԿԱՐԻՆԵԱՆ (ներս մտնելով). Սա նա է, նրա գրասենեակն է:  
 Ա՛խ, Աստուած իմ. քիչ է մնում սիրտս գնայ:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ի՞նչ էք կամենում, օրիորդ:

ԿԱՐԻՆԵԱՆ (ձեռք մեկնելով Մայիլեանին). Նախ և առաջ  
 թոյլ տուէք ինձ Ձեր ձեռքը սեղմելու, Ձեր ազնիւ և պատուաւոր  
 ձեռքը, որպէս զի երկուսիս սրտի զարկերակն էլ մի տեսակ  
 լինի:

ՄԱՅԻԼԵԱՆ (ինքն իրեն). Չարմանալի անձնաւորութիւն է:  
 (Նրան) Եղէք բարի, սեղմեցէք:

ԿԱՐԻՆԵԱՆ. Ես հաւատացած եմ, որ իմ այցելութիւնը Ձեզ  
 համար անփաս կլինի:

ՄԱՅԻԼԵԱՆ. Ի հարկէ... Թէպէտ, պէտք է խոստովանուել,  
 որ ես շտապով գործ ունեմ կատարելու և...

ԿԱՐԻՆԵԱՆ. Աւելի լաւ: Այս բոպէիս Ձեր հոգին գտնուում է  
 իմ ցանկացած մթնոլորտում (նստում է). նստեցէք:

ՄԱՅԻԼԵԱՆ. Շնորհակալութիւն (նստում է):

ԿԱՐԻՆԵԱՆ. Պատանեական հասակիցս սկսած բանաստեղծա-  
 կան կայծը վառեց իմ անփորձ հոգին և լինելով երեխայ, ես ըս-  
 կսեցի ոտանաւորներ գրել ցանկապատերի, պատուհանների և  
 դռների վրայ,—մի խօսքով՝ որտեղ պատահում էր: Տարիներից  
 յետոյ այդ կայծը փոխուեց հրդեհի: Գրելու փափագը էլ հանգիստ  
 չի տալիս ինձ... (կարճ լռութիւն): Սկզբում ես ոտանաւորներ էի  
 գրում, ես երգում էի լուսնեակին և աստղերին... Սակայն շու-  
 տով ես փոխեցի ուղղութիւնս և սկսեցի գրել զբամաներ, ողբեր-  
 գութիւններ... քսան տարեկան հասակումս...

ՄԱՅԻԼԵԱՆ. Ձեր կեանքի պատմութիւնը, յիրաւի, շատ հե-  
 տաքրքրական է, սակայն ներեցէք ինձ, որ չեմ կարող մինչև  
 վերջը լսել Ձեզ, որովհետև շատ զբաղուած եմ: Ասացէք ինձ  
 կարճ: Ինչո՞ւ համար էք եկել:

ԿԱՐԻՆԵԱՆ (ձեռքով զարկում է իր հետ բերած ահագին  
 ձեռագիրները). Ահա:

ՄԱՅԻԼ. Այդ ի՞նչ է:

ԿԱՐԻՆ. Այս իմ անքուն գիշերների արդասիքն է, իմ դրաման է, իմ սեփական զաւակը, որին ես չարչարանքներով լոյս աշխարհ եմ բերել: Տալիս եմ Ձեզ, իբրև դատաւորի՝ դատավճիռ կայացնելու:

ՄԱՅԻԼ. Շատ բարի. ես աչքի կանցկացնեմ: Յտեսութիւն (ձեռքը մեկնում է):

ԿԱՐԻՆ. Օ՛, ո՛չ, ո՛չ, այդպէս շուտով չի լինի. նստեցէք, խնդրեմ:

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն) Ա՛յ քեզ մարդ (նստում է): Ահա նըստեցի:

ԿԱՐԻՆ. Նախ և առաջ ես Ձեզ պէտք է բացատրեմ մի քանի մօտիվներ, որոնք վերաբերում են իմ դրամային: Ուրեմն ես ըսկսում եմ...

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն): Սա այսօր չի վերջացնի:

ԿԱՐԻՆ. Պէտք է Ձեզ յայտնեմ, որ ես առհասարակ գրում եմ ծածկանուն տակ: Ծածկանունս «Ճրճոակ է»:

ՄԱՅԻԼ. Շատ գեղեցիկ ծածկանուն է:

ԿԱՐԻՆ. Իմ հեղինակութիւնը բաղկացած է կէսը դրամայից, կէսը վէպից, կէսն էլ ողբերգութիւնից: Իրա պատճառով անունը դրել եմ վիպա-ողբերգական դրամա:

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն) Սա իմ մարսողութիւնը կխանգարի: (նրան) Թո՛ղ տուէք նայելու...

ԿԱՐԻՆ. Յետոյ, յետոյ... բովանդակութիւնը հետևեալն է. ամենքից յարգուած և պատուական Չորանեանի ընտանիքը բաղկացած է ամուսնուց, կնոջից, չորս աղջկանից և երկու տղայից. ապրում են խաղաղ, ուրախ և օրինակելի առաջին գործողութեան մէջ:

ՄԱՅԻԼ. Փառք Աստուծոյ:

ԻԱՐԻԻ. Յանկարծ անսպասելի կերպով մեռնում է հայրը (բազմանշաններով նայում է Մայիլեանին):

ՄԱՅԻԼ. Շատ լաւ:

ԿԱՐԻՆ. Հասկանալի է խեղճ այրիի դրութիւնը: Նա երկրորդ անգամ ամուսնանում է մի այրի մարդու հետ, որի ընտանիքը բաղկացած է լինում չորս որդուց և երկու աղջկանից (նորից նայում է Մայիլեանին):

ՄԱՅԻԼ. Շատ լաւ: Յետո՞յ:

ԿԱՐԻՆ. Յանկարծ... Այդ կինը դեռ չվայելած կեանքի վայելքները, մէկ էլ... անսպասելի կերպով մեռնում է:

ՄԱՅԻԼ. Մեռնում է, լաւ:

ԿԱՐԻՆ. Սգից մի քանի օր յետոյ խեղճ մարդը առաջարկութիւն է անում մի այլ կնոջը որը ունենում է երկու աղջիկ:

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն) Տէր Աստուած: Մի քանիսը ճանճի նման մեռնում են, միւսները սուսկի նման մեծանում:

ԿԱՐԻՆ. Դուք ուշադրութեամբ լսեցիք:

ՄԱՅԻԼ. Այո: Այժմ մենք ի նկատի ունենք տասնևմէկ երեխայ:

ԿԱՐԻՆ. Ներեցէք, տասնևչորս. Առաջին պսակից ունէր...

ՄԱՅԻԼ. Ներեցէք խնդրեմ, երևի տասնևչորս: Քանի գործողութիւնից է բաղկացած Ձեր դրաման:

ԿԱՐԻՆ. Իննը գործողութիւնից և 26 պատկերից:

ՄԱՅԻԼ. (նայում է ժամացոյցին) Իսկ հիմա մենք, որ գործողութեան մէջ ենք գտնվում:

ԿԱՐԻՆ. Երբորդ գործողութեան, տասներորդ պատկերում:

ՄԱՅԻԼ. Ներեցէք ինձ, ամբողջ դրաման ես չեմ կարող լըսել... Ես շատ դժգոհւած եմ. եղէք բարի, թողէք ինձ Ձեր ձեռագիրները:

ԿԱՐԻՆ. (տալիս է ձեռագիրները) Շատ բարի, այժմ յուսով եմ որ դուք բոլորովին ծանօթացաք իմ գրելու ուղղութեան հետ և Ձեզ չպէտք է զարմացնի գործող անձանց շատութիւնը, մէկը միւսի յետևից պատահող անակնկալ և զարհուրելի դէպքերը և Թ-րդ գործողութեան վերջում հերոսների զրկախառնութիւնը, որովհետև բոլորն էլ մի ընտանիքից են...

ՄԱՅԻԼ. Երևակայում եմ ինչ գեղեցիկ և հետաքրքրութիւն շարժող դրամա կըլինի:

ԿԱՐԻՆ. Օ... (աչքերը գետնին յարելով): Ե՞րբ կըհրամայեք ինձ լսելու ձեր կայացրած դատավճիռը:

ՄԱՅԻԼ. Ես կարծում եմ, որ Ձեր դրաման պէտք է կարդալ մեծ ուշադրութեամբ, ուստի...

ԿԱՐԻՆ. (ընդհատելով): Ուստի, ես էլի այսօր կըզամ:

ՄԱՐԻԼ. Այսօր:

ԿԱՐԻՆ. Ես հաւատացած եմ, որ դուք մի քանի պատկերներ կարդալուց յետոյ կըզարմանաք իմ ոճի և սքանչելի բառերի վրայ, որոնք շատ են իմ դրամայում:

ՄԱՅԻԼ. Ճիշտն ասած, ես հիմա էլ զարմացած և շփոթուած եմ:

ԿԱՐԻՆ. Ուրեմն ցտեսութիւն:

ՄԱՅԻԼ. Ցտեսութիւն:

ԿԱՐԻՆ. (մօտենում է դռանը և նորից վերադառնում): Խընդրում եմ Ձեզ մի փոքր զիջող վարուէք իմ հեղինակութեան հետ,

չէ՞ որ, մենք մի ընտանիքի որդիք ենք, Ապոլլոնի զաւակները: Ցտեսութիւն: (Գնում է):

ՄԱՅԻԼ. Օ՛, Մեծդ Ապոլլոն, եթէ այդ տիպի երկրպագուներ շատ ունիս, այն ժամանակ ես հրաժարվում եմ քեզանից, ես չեմ ցանկանում քո որդին կոչուել: Ոչ մի բոպէ հանգստութիւն չեն տալիս, արի ու վէպիկ գրի այս պայմաններում: Ի՞նչպէս չէ, շատ կը գրես (նայում է ձեռագրներին): Պէտք է մարդ վերին աստիճանի յիմար լինի, որ կարգայ գոնէ մի-երկու երես այս անուելի ձեռագրից. (ձեռագրերները վայր է ձգում սեղանի վրայ): Քնիր խաղաղութեան մէջ վիպա-ողբերգական-դրամատիքական զարանցանք (ներս է մտնում Վարդգէսը):

## Տեսիլ V

### Մայիլեան եւ Վարդգէս

ՎԱՐԴ. Բարե, հօրեղբայր. ես Ձեզ չխանգարեցի՞:

ՄԱՅԻԼ. Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ քո այցելութեան համար:

ՎԱՐԴ. Ես Ձեզ ուրախացնելու եմ եկել:

ՄԱՅԻԼ. Ի՞նչ է, վէպիկ գրելու նիւթ հօ չես բերել:

ՎԱՐԴ. Ձէ, հօրեղբայր: Այսօր ծառայութեանս մէջ բարձր պաշտօն եմ ստացել աւելի ոռճիկով:

ՄԱՅԻԼ. Շնորհաւորում եմ, շնորհաւորում... բայց այդ բոլոր պատմութիւնը ոչ մի վիպական շահագրգռում չունի, այնպէս որ ինձ համար այնքան էլ նշանակութիւն չունի: Երևակայիր, ես պէտք է մի վէպիկ գրեմ, իսկ թեմա չեմ կարողանում գտնել:

ՎԱՐԴ. Ոչինչ, հօրեղբայր, կը գտնէք:

ՄԱՅԻԼ. Կը գտնեմ, ի հարկէ կը գտնեմ. կընստես, գրիչդ կը վերցնես, ու կը խորասուզուես... Թըր՛խկ՝ մի այցելու... Թըր՛խկ՝ մի ուրիշ այցելու: Ահա՛ զմայլուիր. (տալիս է նրան Կարինեանի ձեռագրերները):

ՎԱՐԴ. Այս ի՞նչ է:

ՄԱՅԻԼ. Վիպա-ողբերգական-դրամատիկական գրուածք մարդկանց աճեցողութեան և մահացութեան մասին: XX-րդ դարի դրամատուրգիայի նոր-ուղղութեան գրուածք. և այս անմիտ և յիմար ստեղծագործութիւնը ես խոստացել եմ կարդալ և յայտնել իմ կարծիքը նրա մասին:

ՎԱՐԴ. Խեղճ հօրեղբայր (չէմքում երևում է Ջալալը):

## Տեսիլ VI

## Նոյնիք եւ Ջալալ

ՋԱԼ. Մի ինչ որ օրիորդ կամենում է Ձեզ տեսնել:

ՄԱՅԻԼ. Նորից, Տէր Աստուած, էս ի՞նչ պատիժ է: Սրանք ինձ սպանել են ուղղում: Ասա՛ որ ես տանը չեմ:

ՋԱԼ. Ես ասացի, բայց նա անպատճառ ուղղում է Ձեզ հետ խօսել:

ՄԱՅԻԼ. Ո՛հ, սպանեցին, էլի՛: Կանչիր (Ջալալը դուրս է գնում):

ՎԱՐԴ. Հօրեղբայր, ինչ՞նչ այդքան անբաւական էք. չէ՞ որ երիտասարդ օրիորդների հետ շփուելը շատ հաճելի է:

ՄԱՅԻԼ. Նայած ու՛մ համար, ես գնում եմ... (սեղանից հաւաքում է թղթերը, թանաքամանը գրիչը և այլն) Եթէ իրօք քեզ հաճելի է «երիտասարդ օրիորդների» հետ խօսելը, խնդրեմ բարի եղիր, ընդունիր իմ փոխարէս, իսկ ես կը գոլորշիանամ:

## Տեսիլ VII

## Վարդգէս եւ Աւսղիկ

ԱՍՏՂԻԿ (երկշոտ կերպով ներս մտնելով) Ներեցէք... Գուցէ ես անժամանակ եմ...

ՎԱՐԴ. (ինքն իրեն) Ինչ լաւիկն է: (նրան) Ի՞նչ էք կամենում, օրիորդ:

ԱՍՏՂԻԿ. Այսինքն, ճիշտն ասած ես... ոչինչ... ես կամենում էի միայն... Այսինքն իմ միակ ցանկութիւնն էր Ձեզ հետ ծանօթանալ:

ՎԱՐԴ. Շատ ուրախ եմ: (ինքն իրեն) Հօրեղբայրս թէ՛մայի էր ման գալիս. ահա ես գտայ (հրաւիրելով նստել) խնդրեմ, նստեցէք:

ԱՍՏՂԻԿ. Ա՛խ, շատ շնորհակալ եմ... (ինքն իրեն) կընըստեմ... Չէ՞ որ հայրս թոյլ տուեց: (Նստում է):

ՎԱՐԴ. (նստում է նրա կողքին) Ուրեմն, դուք ցանկանում էք ինձ հետ ծանօթանալ: Շատ ուրախ եմ:

ԱՍՏՂԻԿ. Դուք ծիծաղելի չէ՞ք գտնում իմ ցանկութիւնը:

ՎԱՐԴ. Ընդհակառակը, ես խրախուսում եմ Ձեզ:

ԱՍՏՂԻԿ. Ես կարգացել եմ ձեր գրուածքները և պէտք է խոստովանուած, որ համարեա կախարդուած եմ Ձեզանից:

ՎԱՐԴ. (ինքն իրեն) Հօրեղբայրս շատ գեղեցիկ երկրպագուհիներ է ունեցել. նախանձում եմ:

ԱՍՏՂԻԿ. Այսինքն ուզում եմ ասել՝ ոչ թէ Ձեզանից եմ կախարդուած, այլ Ձեր գրուածքներից:

ՎԱՐԴ. Հասկանալի է: Թոյլ տուէք իմանալ Ձեր անունը:

ԱՍՏՂԻԿ. Աստղիկ:

ՎԱՐԴ. Ինչո՞ւ օր. Աստղիկ, դուք առաջ շնորհ չբերեցիք իմ գրասենեակը:

ԱՍՏՂԻԿ. Շատ պարզ պատճառով: Հայրս արգելում էր. նա մինչև անգամ շատ անբաւական էր, երբ ես Ձեր գրուածքները կարդում էի... Վերջապէս նա ինքը այսօր սկսեց Ձեր և Ձեր գրուածքների մասին խօսել և թոյլ տուեց ինձ Ձեզ մօտ գալու:

ՎԱՐԴ. Աստուած իմ, որքան բարի է Ձեր հայրը:

ԱՍՏՂԻԿ. Երեի նա համոզուած է, որ դուք... արժանի էք յարգանքի և... նա ձեզ հաւանել է...

ՎԱՐԴ. Ուրեմն այդպէս: (համբուրում է նրա ձեռքը):

ԱՍՏՂԻԿ. Ա՛խ, ի՞նչ էք...

ՎԱՐԴ. Օ՛, մի խլէք ինձանից Ձեր ոսկէ ձեռքը: (նորից համբուրում է):

ԱՍՏՂԻԿ. Ես Ձեզ չեմ արգելի... Ձէ՞ որ հայրս թոյլ տուեց.

ՎԱՐԴ. Օ՛, անգին հայր:

ԱՍՏՂԻԿ. Երբ ես կարդում էի Ձեր վէպերը, ես երևակայում էի Ձեզ ակնոյններով և ոչ երիտասարդ... Իսկ երբ որ կարդացի Ձեր ոտանաւորները, Դուք երևակայութեանս մէջ տգաւորուեցիք այնպէս, ինչպէս ես Ձեզ այժմս տեսնում եմ. կենսուրախ, ժպիտը դէմքիդ... Ա՛խ, ի՞նչ հիանալի էք դուք գրում:

ՎԱՐԴ. Օ՛, հաւատացէք ինձ, բոլոր իմ սոնէտները անկեանք, անշնորք են և հիմա միայն, Ձեզ տեսնելով, ես իսկապէս բանաստեղծ եմ դառնում: (Մօտենում է նրան աւելի մօտիկ):

ԱՍՏՂԻԿ (ուզում է վեր կենալ աթոռից. բայց յետոյ մնում է իր տեղը, ինքն իրեն). Կըմնամ... Ձէ՞ որ հայրս թոյլ տուեց (նրան): Ա՛խ, Աստուած իմ, եթէ կարողանամ ոտառաւորներ գրել...

ՎԱՐԴ. Եթէ թոյլ կըտաք, ես Ձեզ կըսովորեցնեմ:

ԱՍՏՂԻԿ. Օ՛, ուրախութեամբ:

ՎԱՐԴ. (աւելի մօտենում է): Սիրելի Աստղիկ, նախ քան ոտանաւորներ գրելը պէտք է Ձեր սրտում սրբազան կրակ վառէք...

ԱՍՏՂԻԿ. Սրբազան կրակ:

ՎԱՐԴ. Այո՛, միայն այն ժամանակ ոտանաւորները ինքն իրենց կըզան. օրինակ, ես նայելով ձեր ծով աչքերին, զգում եմ, որ կարող եմ մի ամբողջ պօէմ ստեղծագործել:

ԱՍՏՂԻԿ. Ի՞նչ զարմանալի է... ես ինքս էլ նոյնն եմ ըզգում:

ՎԱՐԴ. Ուրեմն սկսենք: (Համբուրում է Աստղիկին):

ԱՍՏՂԻԿ. Ա՛խ!... ինչո՞ւ...

ՎԱՐԴ. Չէ՞ որ Ձեր հայրը թոյլ տուեց:

ԱՍՏՂԻԿ. Ճիշտ... հայրս թոյլ տուեց:

ՎԱՐԴ. Հա, ես մոռացայ յիշել ամենազլխաւորը: Ոտանաւորներ գրելու համար ամենաառաջին պայմանը սէրն է:

ԱՍՏՂԻԿ. Հա՛, իսկ զիտէ՞ք, ես արդէն սկսել եմ սիրել... (Վարդգէսը ուրախութեան շարժումներ է անում): Ոչ թէ Ձեզ, այլ ընդհանրապէս... Ոտանաւորներ... Բանաստեղծութիւններ... Ես էլ էի գրում, բայց իմ բոլոր ոտանաւորները դուրս էին գալիս շատ թոյլ, անշնորք... Իմ ստեղծագործութիւնների մէջ գլխաւորապէս պակասում էր այն... Դուք ինչպէս ասացի՞ք:

ՎԱՐԴ. Սրբազան սիրոյ կրակը:

ԱՍՏՂԻԿ. Այո՛, հէնց այդ. սրբազան սիրոյ կրակը. ես չէի յանդգնում Ձեզ մօտ բերել ոտանաւորներս, իսկ եթէ դուք թոյլ կըտայք...

ՎԱՐԴ. Ի՞նչպէս, դուք ուզում էք զնա՞լ:

ԱՍՏՂԻԿ. Ես շուտով կըվերագանամ. չէ՞ որ մենք շատ մօտիկ ենք ապրում միմեանցից:

ՎԱՐԴ. Իսկ յետոյ մենք միասին կըզրենք. համաձայն էք:

ԱՍՏՂԻԿ. Օ՛, ուրախութեամբ:

ՎԱՐԴ. Ասացէ՛ք Ձեր հօրը, որ ես Ձեզ աստուածացնում եմ:

ԱՍՏՂԻԿ. Անպատճառ կասեմ. չէ՞ որ նա թոյլ տուեց ինձ Ձեզ հետ ծանօթանալ: Ցտեսութիւն, ցտեսութիւն: (Գնում է):

ՎԱՐԴ. Աստուանձ իմ. Ո՛ւր է զլուխս (ձեռքերով շօշափում է գլուխը) կայ, այստեղ է. իրա տեղն է: Սքանչելի՛, սիրուն աղջիկ: Օ՛, ես սիրահարուած եմ. սիրուց խելագարվում եմ: Բայց ի՞նչ անեմ. նա շուտով կը վերագանայ. թերևս հօրեղբօրս պատահի... Օ՛, Աստուած ո՛չ անի: Պէտք է հօրեղբօրս հետ գործը դրստել:

## Տեսիլ VIII

## Վարդգէս եւ Մայիլեան

ՄԱՅԻԼ. (ներս մտնելով) Գնաց:

ՎԱՐԴ. Այո՛, գնաց:

ՄԱՅԻԼ. Գեղեցիկ օրիորդ էր:

ՎԱՐԴ. Ոչինչ... այսինքն, այնպէս... թողնենք մի կողմը...  
ես Ձեզ, հօրեղբայր, հրաւիրում եմ նախաճաշի, բարձր պաշտօն  
ստանալու համար:

ՄԱՅԻԼ. Ես ուրախութեամբ, բայց... իմ վէպիկս...

ՎԱՐԴ. Կյաջողեցնէք. գնանք պանդոկ և մի շիշ շամպանսկի  
խմենք: Համաձայն ես.

ՄԱՅԻԼ. Շամպանսկի, հրապուրիչ է: Գնանք:

ՎԱՐԴ. (ինքն իրեն) Շատ լաւ. հօրեղբօրս կխմացնեմ և  
կթողնեմ պանդոկում, իսկ ևս կվերադառնամ (գնում են: Ներս  
են մտնում Աստղիկը և Ջալալը):

## Տեսիլ IX

## Աստղիկ եւ Ջալալ

ՋԱԼԱԼ. Սպասեցէք մի րոպէ, այս րոպէիս կյայտնեմ Ձեզ.  
(բաց է անում աջ դուռը) Օ... պ. Մայիլեանը տանը չէ:

ԱՍՏՂԻԿ. Ո՞ւր է:

ՋԱԼԱԼ. Չգիտեմ. երևի այգումն է... նրանց գլխարկներն էլ  
չկան... Դուք նստեցէք, օրիորդ, իսկ ես կգնամ այգի, գուցէ  
այնտեղ են: (գնում է աջ դռնով):

ԱՍՏՂԻԿ (մենակ) Ես չգիտեմ ի՞նչ է ինձ հետ կատարվում...  
Սիրտս ճմլվում է... Դողում եմ... Ոչ թէ վախից, ո՛չ, այլ ուրա-  
խութիւնից (ձեռքերով սեղմում է գլուխը). սակայն իսկապէս ի՞նչ  
զարմանալի է... Այսօր նրա հետ առաջին անգամն էի խօսում,  
այն ինչ ինձ թւում էր, թէ մենք վաղուցուայ ծանօթներ ենք:  
Ի՞նչու է այդպէս. նա ինձ պատմում էր իր սիրոյ մասին... Համ-  
բուրում էր ինձ... (վճռակտն) Սակայն ի՞նչ կայ այստեղ ամա-  
չելու. չէ՞ որ հայրս թոյլ տուեց. (կարճ լռութիւնից յետոյ): Իսկ  
ինչ գեղեցիկ աչքեր ունի: Ովկիանոսի նման խորն են նրանք...

և երբ որ բռնեց ձեռքս և... համբուրեց... ևս... քիչ մնաց, որ նրա վզովն ընկնեմ... Ա՛խ, այդ սարսափելի է. է՛հ, ոչինչ չկայ սարսափելի, քանի որ հայրս թոյլ տուեց: (Ջալալը վերադառնում է):

ՋԱԼԱԼ. Ոչ ոք չկայ, ոչ պ. Մայիլեանը և ոչ էլ կինը,

ԱՍՏՂԻԿ. Ի՞նչ կին:

ՋԱԼԱԼ. Տիկին Մայիլեանը:

ԱՍՏՂԻԿ. Ուրեմն նա մայր էլ ունի, հա՛:

ՋԱԼԱԼ. Մայրը վաղուց է վախճանուած, ոչ, կինը:

ԱՍՏՂԻԿ. Կինը, ուրեմն նա պսակուած է: (Մեկուսի) Պսա-

կուած... նա պսակուած է... խաբեց ինձ... ինչ ցածութիւն է. հայրիկը ճաշտ էր ասում, որ բոլոր գրողները նենգամիտ գայթակղիչներ են, անամօթ և անխիղճ մարդիկ են: Օ՛, թանկագին հայրիկ, որքան ճիշտ էին քո խօսքերը. իսկ ես՝ յիմարս հակաճառում էի, հաստատում էի որ նա սխալվում է... և ի՞նչ դուրս եկաւ, ի՞նչ կասի հայրիկը. իսկ ես ի՞նչ պէտք է ասեմ... Օ՛, ամօթ, ամօթ... (երեսը ձեռքերով ծածկում է) Այս տետրերը կյանձնէք պ. Մայիլեանին (տետրերը տալիս է Ջալալին) և կասէք, որ նա էլ երբէք ինձ չի տեսնի... երբէք: (Դուրս է գնում):

ՋԱԼԱԼ. Ա՛յ քեզ օյին: Իմացաւ թէ չէ, որ պսակուած է, սիրտը նեղացաւ. էս ի՞նչ բան էր... Չլինի՞ թէ սիրահարուած է... Կատարեալ մասխարութիւն կլինի. Բայց պ. Մայիլեանը սխալուած չէ, նա լաւ ապրանք է ճանկը գցել:

## Տեսիլ X

### Ջալալ եւ Մայիլեան

ՄԱՅԻԼ. (շտապով ներս է մտնում): Թ՛ու... Հազիւ դուրս պրծայ. վարդգէսը պատահեց ընկերներին և սկսեց խօսել նրանց հետ, իսկ ես օգտուելով առիթից ծլկուեցի այստեղ: (Ջալալին տեսնելով): Դու ի՞նչ ունես այստեղ:

ՋԱԼԱԼ. Մի ինչ որ օրիորդ այստեղ Չեղ էր ուզում... է՛հ, որ առաւօտը եկել էր:

ՄԱՅԻԼ. Ի՞նչ... Ուրեմն նա այստեղ էր... Օ՛, անիծեալ «ճրճուակ»:

ՋԱԼԱԼ. Ոտանաւորներ բերեց և հրամայեց, որ Չեղ յանձնեմ: (Տետրը տալիս է Մայիլեանին):

ՄԱՅԻԼ. Կարծես գրելու մեքենայ լինի: Առաւօտեան—ող-  
բերգութիւն, հիմա—ոտանաւորներ: Տէր իմ Աստուած, երևի գի-  
շերս էլ մի վէպ կրերի: (Բեմի ետևից լսվում է դանդի ձայն):  
է՛լի: Տէր Աստուած, սրանք ինձ կսպանեն իրենց այցելութիւն-  
ներով: (Չալալը գնում է. ներս է մտնում Դդումը):

## Տեսիլ XI

### Մայիլեան եւ Դդում

ԴԴՈՒՄ. Փնփ և փնփ Աստուծոյ. լաւ է Ձեզ տանը պատահեցի,  
մի կողմից. շուռ եկէք իմ կողմը... Հիմա էսպէս (պտոյտ տալով  
Մայիլեանին) Լաւ է, շատ լաւ է, Ո՞վ կմտածեր, որ սրա գլխում  
էդ տեսակ բաներ կլինեն:

ՄԱՅԻԼ. Ի՞նչ էք կամենում, ես Ձեզ չեմ ճանաչում:

ԴԴՈՒՄ. Կճանանչէք:

ՄԱՅԻԼ. Թոյլ տուէք...

ԴԴՈՒՄ. Ձեմ թոյլ տայ: Հերիք է, ի՞նչ որ դուք թոյլ  
տուեցիք Ձեզ, մի կողմից:

ՄԱՅԻԼ. (Մեկուսի)... Սա ի՞նչ որ խելքից պակաս է...  
(բարձր) Ինչը Ձեզ այստեղ բերեց.

ԴԴՈՒՄ. Ինչը բերեց, իմ աղջիկը. հասկանում էք: Աղջիկս  
համարեա տրաքուեց, մի կողմից:

ՄԱՅԻԼ. Իմ ի՞նչ գործն է:

ԴԴՈՒՄ. Ձեր ինչ գործն է: Դուք էիք մեղաւոր, դուք. փո-  
խանակ խոզի դմակ ծախողի հետ պսակուելու, ամբողջ օրը նըս-  
տած Ձեր վէպերն էր կարդում և ինքն էլ ինչ որ յիմար ոտա-  
նաւորներ է սկսում գրել:

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն) Հա՛, սա էն ճրուակի հայրն է, հա՛...  
Շատ լաւ ընտանիք են՝ աղջկանից սկսած մինչև հայրը:

ԴԴՈՒՄ. Ձեր ոտանաւորները աղջկանս խելքից հանել են.  
ես իրաւունք տուեցի Ձեզ հետ ծանօթանալու և ոչ թէ համբոյր-  
ներով ելնէիք, մի կողմից:

ՄԱՅԻԼ. Բայց հաւատացնում եմ Ձեզ պ. Ճրճոակ...

ԴԴՈՒՄ. Դդում:

ՄԱՅԻԼ. Ո՞ւմ հասցէին էք ասում:

ԴԴՈՒՄ. Ո՞ւմ, Ձեր: Դուցէ դուք ասէք, որ իմ աղջիկը

Ձեզ մօտ չի եղել: Դուք չէիք, որ խոստացել էիք կարդալ նրա գրուածքները:

ՄԱՅԻԼ. Այո, խոստացել էի, խոստացել էի նրա համար, որ ազատուեմ նրանից:

ԴԴՈՒՄ. Սո՛ւտ էք ասու՛մ:

ՄԱՅԻԼ. Բայց, պ. Ճրճուակ...

ԴԴՈՒՄ. Դղճում:

ՄԱՅԻԼ. Ու՛մն էք ասու՛մ:

ԴԴՈՒՄ. Ո՞ւմ... հասկանալի բան է՝ Ձեզ: Ի՞նչ իրաւունք ունէիք դուք անփորձ աղջկան գայթակղեցնելու: Ես նրան մարդու կտամ, ո՞ւմ իմ քէֆը կտայ, մի կողմից:

ՄԱՅԻԼ. Ես դրա դէմ ոչինչ չունեմ: Միայն չեմ հասկանում, թէ նա ի՞նչ կարող էր Ձեզ ասել: Ես նրա հետ այնպէս քաղաքավարի էի... նա ինձ չի հասկացել, հաւատացնում եմ...

ԴԴՈՒՄ. Ձեզ չի հասկացել, հա՛... Ձէ, չէք կարող խարե ինձ. ես նրան էս բոպէիս էստեղ կբերեմ և և եթէ դուք սուտ դուրս գաք, էն ժամանակ ես Ձեզ հետ իմ հաշիւը կտեսնեմ (փայտով սպառնում է):

ՄԱՅԻԼ. Մի փոքր զգոյշ եղէք, պ. Ճրճուակ...

ԴԴՈՒՄ. Դղում, հազար անգամ պէտք է ասեմ:

ՄԱՅԻԼ. Ո՞ւմն էք ասու՛մ:

ԴԴՈՒՄ. Ո՞ւմ, ի հարկէ Ձեզ: (գնում է):

ՄԱՅԻԼ. Ա՛յ քեզ օյին: Սրանք ինձ գերեզմանի դուռը կհասցնեն (ուզում է դուրս գնայ դռնով, բայց յանկարծ ներս է մըտնում օր. Կարինեանը և կանգնեցնում նրան):

## Տեսիլ XII

### Մայիլեան և օր. Կարինեան

ԿԱՐԻՆ. Ներեցէք, որ ես Ձեզ անհանգստացնում եմ... Բայց դատավճիռը լսելու անհամբերութիւնը...

ՄԱՅԻԼ. Նորից, նորից դուք, մեծարգոյ օրիորդ, ի՞նչ էք անում ինձ հետ: Ազնիւ խօսք, ես խելքս կկորցնեմ: Նոր ինչ որ վիպա-ողբերգական դրամա էր գլխիս...

ԿԱՐԻՆ. (ընդհատելով) Ուրեմն դուք կարդացել էք: Այո՞, կարդացել էք: (Նստում է): Օ՛, ես հաւատացած եմ, որ իմ դրաման Ձեզ վրայ հաճելի տպաւորութիւն կթողնէր: Որ գործողու-

թիւնն էք աւելի ճաւանում. ես կարծում եմ 17-րդ պատկերը, երբ ամբողջ ընտանիքը գետի ափին հաւաքուած լուածք է ա- նում լուսնեակի վառ լոյսի տակ; իոկ հեռում լսելի է գորտերի ներդաշնակ կրկոցը: Կխօսենք, սիրելիս, կխօսենք դրա մասին. ես այնպէս բարձր եմ գնահատում Ձեր կարծիքը:

ՄԱՅԻԼ. Այդ տեսակ գրուածքի ես իմ կեանքի մէջ երբէք չեմ պատահել:

ԿԱՐԻՆ. Ճիշտ էք ասում: Ուրեմն իմ գրուածքը մի ամբողջ դարեշրջան կկազմուի, ամեն լեզուի կթարգմանուի... նստեցէք, խնդրեմ:

ՄԱՅԻԼ. Մեծարգոյ օրիորդ...

ԿԱՐԻՆ. Ինձ ուղղակի ճրճուակ կանչեցէք, խնդրում եմ. չէ՞ որ մեր սրտերը իրար հետ ձուլուած են, մենք սերտ բարեկամ- ներ ենք:

ՄԱՅԻԼ. (ինքն իրեն) Օ, Աստուած ոչ անի այդ տեսակ բարեկամութիւնը:

ԿԱՐԻՆ. (մօտենալով նրան) Ինձ ոչ ոք չէր ուզում հասկա- նալ, միայն դուք ինձ հասկացաք:

ՄԱՅԻԼ. Համարեա... Միայն մի բան չեմ հասկանում, ին- չ՞ո՞ւ ինձ այնքան նեղութիւն պատճառեցիք:

ԿԱՐԻՆ. Ճիշտ որ շատ տարօրինակ է, նամանաւանդ 7-րդ գործողութիւնը. 20-դ պատկերը:

ՄԱՅԻԼ. Ներեցէք, Գաւթ ինձ չէք հասկանում. ինչո՞ւ դուք Ձեր հօրը պատմել էիք այնպիսի պատմութիւն, որ ես համարեա երազումս էլ չեմ տեսել:

ԿԱՐԻՆ. Ես ասել եմ միայն, որ Ձեզ մօտ եմ եղել. ինչպէս հնազանդ որդի ես կարծում եմ, որ պարտական էի ասելու (մի փոքր լուութիւնից յետոյ) Պէտք է խոստովանուել, որ ծնողներս դէմ են գրականութեամբ պարապելու:

ՄԱՅԻԼ. Գիտեմ. նա մինչև անգամ կարծում էր, որ դուք այդ ասպարէզը ընտրել էք իմ դրդմամբ... Գանգատով եկաւ ինձ մօտ...

ԿԱՐԻՆ. Նա Ձեզ մօտ է՞ր:

ՄԱՅԻԼ. Այո՛. և ես Ձեզ խորհուրդ կտամ, ինչպէս ընկեր, ամուսնացէք այն վաճառականի հետ:

ԿԱՐԻՆ. Ի՞նչ վաճառականի:

ՄԱՅԻԼ. Ձեր հայրը ասաց ինձ, որ մտադիր է Ձեզ նրա հետ պսակելու:

ԿԱՐԻՆ. (շտապով) Ի՞նչ. իմ հայրը ուզում է ինձ պսակել: Ո՞ւր է այդ մարդը, ո՞ւր է (արագ-արագ հագնում է գլխարկը)

Օ, ի՞նչ բախտաւորութիւն: Օ, եթերուֆն եմ սաւառնում... սաւառնում...

ՄԱՅԻԼ. Սաւառնեցէք, սաւառնեցէք. Դուք ինչպէս հնազանդ որդի պարտաւոր էք Ձեր ծնողների կամքը կատարել:

ԿԱՐԻՆ. Այո՛, այո՛, ամուսնանում եմ, ամուսնանում: Չկորցնեմ ոսկէ ժամանակը: Վերջապէս... վերջապէս ես ամուսին կուսենամ: Օ, Աստուած իմ: (վազում է գոների կողմը):

ՄԱՅԻԼ. Տարէք Ձեր ձեռագիրները:

ԿԱՐԻՆ. (շտապով վերցնելով) Թռչեմ, թռչեմ (փախչում է):

ՄԱՅԻԼ. Թռիր, թռիր, անպոչ, վայրահանջ կաշաղակ (դռնում երևում է Դդումը):

### Տեսիլ XIII

## Մայիլեան եւ Դդում

ԴԴՈՒՄ. Ես նորից Ձեզ մօտ եմ գալիս և յուսով եմ, որ վերջին անգամը չի լինի:

ՄԱՅԻԼ. Տէր Աստուած: Երբ է վերջ լինելու այս խայտառակ այցելութիւններին: Ի՞նչ էք ցանկանում ինձանից, արդէն ամեն ինչ պարզուած, վճռուած է: Ձեր աղջիկը ամուսնանում է Ձեր ցանկացած խոզի դմակ ծախող վաճառականի հետ...

ԴԴՈՒՄ. (ուրախ) Հա՛, հա՛, հա՛...

ՄԱՅԻԼ. Պ. Ճրճուակ, դուք արդէն փոխել էք Ձեր մտադրութիւնը:

ԴԴՈՒՄ. Ի՞նչ իրաւունքով էք ինձ ճրճուակ կանչում, իմ անունը Դդում է, Դդում, մի կողմից:

ՄԱՅԻԼ. Հապա ինձ ինչո՞ւ էիք Դդում կանչում:

ԴԴՈՒՄ (զարմանալով) Ձե՞զ, իսկի մտքովս էլ չի անցկացել: Ես ինքս եմ Դդումը... Հասկացա՞ք:

ՄԱՅԻԼ. Հասկանում եմ, ինչո՞ւ ինձ վաղուց չասացիք. թէ չէ՛ Դդում հա Դդում... Մինչև անգամ վիրաւորական էր, բայց վերջ ի վերջոյ ինձ համար մենոյն է. ձեր աղջիկը ամուսնանում է վաճառականի վրայ և... թողէք ինձ հանգիստ:

ԴԴՈՒՄ. Իմ թանկագին աղջիկը, գիտէք, կամուսնանայ էն մարդու վրայ, ո՞ւմը կընտրեմ ես, մի կողմից: Այդպէս: Իսկ որովհետև նա հնազանդ աղջիկ է, ես թոյլ կտամ նրան ամուսնանալու Ձեր հօրեղբոր որդու հետ:

ՄԱՅԻԼ. Ի՞նչ, եթէ իմ հօրեղբոր որդին պսակուի Ձեր հնա-  
զանդ աղջկայ հետ, ես նրան գժանոց կուղարկեմ:

ԴԴՈՒՄ. Իսկ ես, ասում եմ, որ կպսակուի: Մենք երեքով  
այդպէս վճռեցինք Ձեզ մօտ գալիս: Ձեր հօրեղբոր որդուն ես  
հաւանում եմ, և որ ամենից զլիսաւորն է եզան նման առողջ  
տղայ է, մի կողմից. ահա և նրանք:

#### Տեսիլ XIV

### Նոյն, Վարդգէս և Ասղիկ

ՎԱՐԴԳԷՍ. Սիրելի հօրեղբայր, շնորհաւորի՛ր ինձ. ես աշ-  
խարհի ամենաբախտաւոր մարդկանցից մէկն եմ:

ԱՍՏՂԻԿ. (Մայիլեանին) Երկրորդ հայր, թոյլ տուէք Ձեզ  
համբուրելու:

ՄԱՅԻԼ. (զարմանալով) Բայց, օրիորդ...

ԱՍՏՂԻԿ (նայում է հօրը քնքշութեամբ) Առաջին հայրիկը  
թոյլ տուեց (համբուրում է Մայիլեանին):

ՄԱՅԻԼ. Սա Ձեր հայրիկն է, ես ոչինչ չեմ հասկանում:

ՎԱՐԴԳԷՍ. Օ՛, այդ ահագին պատմութիւն է, հօրեղբայր:  
Դուք այդ թէմայով մի հետաքրքիր վէպ կամ կօմէդիա  
կգրէք:

ՄԱՅԻԼ. Գոնէ, բացատրեցէք ինձ...

ԴԴՈՒՄ. Է՛, էլ ի՞նչ էք շատ խօսում. պսակուեցէք, մի  
կողմից, և վերջացաւ գնաց:

## ՄԵՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Իմ Պապիկին,  
Իմ Կօսիկին

Ը.

I

Բանտային գիշեր—

Անվերջ է՝ երկար և մոլոր վախով լի...

Ականջ եմ դնում.

Պարսպի ներքև խենթ, խելառ գետը, ինչպէս սիրող մայր,  
ձայնով միալար «նանիկ» է ասում անթարթ աչքերիս, անքուն  
աչքերիս...

Բանտային գիշեր—

Անհոն է՝ անծայր և քստմընելի...

Ականջ եմ դնում—

Իմ կից խցիկից աղմուկ է լսում՝ շղթաներ շաչում.— Ոգի-  
ներ դժգոյն արդէն վխտում են իմ մթնոլորտում...

— Լճու. հնազանդուիր. թնդում է յանկարծ ծեր բանտա-  
պետի ձայնը անսասան, ձայնը մարդասպան...

Եւ մահապարտը լռելեայն, անձայն առաջ է քայլում հաս-  
տատ քայլերով փոքրիկ միջանցքում:

II

Բանտային գիշեր—

Սև է՝ մահաբեր և արիւնով լի...

Սեպացած ժայռեր՝ յաւիտեան վկայ, սևացած լեռներ՝ մըշ-  
տական դիտող. ներքև են նայում, դառնագին ժպտում:

— Շը՛ղկ ու շըրը՛ղկ, շը՛ղկ ու շը՛րըղկ...

Հինաւուրց բանտի ընդարձակ այգում՝ գիշերուայ ծոցում  
հեզ մահապարտի շղթաները կուռ ոճրագործ կեանքին նզովք են  
կարդում՝ թափով շառաչում...

Ահա կախադան—

Մանկամարդ զոհը համարձակ դէմքով իրեն է յանձնում ա-  
նարգ ձեռքերին, կախում անխռով...

Նրա սև մահը ուժ է տալիս թարմ կուռղ մարտիկին,  
կեանք է բաշխում նոր, մարմնին վերաւոր... Մատաղ, վեհ հոգին  
գնում է, ձուլւում իւր ընկերների փառապանձ հոգուն, որ գա-  
ղափարի մեծ ճանապարհին ընկնում են, մեռնում ժպիտը դէմ-  
քին...

Բանտային գիշեր—

Անվերջ է՝ երկար և մութ՝ վախով լի...

Ականջ եմ դնում—

Պարսպի ներքև խենթ, խելառ գետը, ինչպէս սիրող մայր,  
ձայնով միալար «նանիկ» է ասում անթարթ աչքերիս, անքուն  
աչքերիս...

17 թ. 21/III

Թ. նահ. բանտ:

Բ,

Էնուշին!

Մենակ եմ.

Քամին մրրկող, սևասիրտ քամին մեծ թափով պատուհանս  
է ծեծում, հարւածում և ծխնելուզում հեկեկում վայում:—

Մըսում եմ՝ տնակս ցուրտ է և դատարկ:

Մըսում է և իմ ցաւատանջ հոգին—

Յիշում եմ, և այդ այսօր, մի ժամ առաջ էր՝ ես երջանիկ էի—

Նա իմ կողքին աչերը սիրուն, և՛ անուշ՝ հոգեկան, և՛ ու-  
րախ՝ մանկական—նայում էր ու ժպտում և աղմկում իմ հո-  
գին...

—ԲՈՒՆՈՒՆ, ՎՈՒՆ...

Քամին գիժ, խելառ քամին պար բռնած, վէճ մտած ձիւնի  
հետ, թաւալւում է, գլորւում, և ոռնում խենթ ու մենթ:

Մենակ եմ.

Մենակ է և իմ ցաւագար հոգին...

Եւ հառաչանքները աղմկող, ինչպէս մրրկող քամին, ժայթ-  
քում են իմ սրտի մութ խորշերից և տարւում են, լուծւում գի-  
շերուայ խորքում...

—Վնւ.նւ, բը՛...

Քամին է դարձեալ սևասիրտ քամին, որ մեծ հռանդով  
տնակս է երերում, շարժում և սիրտս արնում, քամում...

1913 թ.

Իգդիր:

Լևոն—Լևոնի



## ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՍ

### Ա. ՆԱՄԱԿ

Մայրիկ, անգին մայրիկ...

Մի նեղանար, որ նամակս այսքան ուշ եմ ուղարկում քեզ և մի անիծիր, որ այսքան ուշ եմ հոգում իմ ցաւատանջ ընտանիքի ապրուստի համար:

Երբ գնացքը բաժանեց ինձ քեզնից, մի բոպէ արցունքներս ողողեցին աչքերս, սիրտս բարձրացաւ ուժգին և հանդարտ իջաւ ու սառեց կրծոսկրներիս տակ... Ինչ, իմ քաղցր մայրիկ, շատ դժուար է բաժանուել հայրենիքից, ծնողներից և նրանից, որին երկար ժամանակ, շատ ու շատ տարիներ փաղաքշել եմ իմ չոր կրծքիս վրայ, իմ մաշուած, կոշտացած ձեռքերովս...

Անգին մայր:

Ահա չորրորդ օրն է, որ հասել եմ այս քաղաքը. ես քաղաք եմ ասում, մայրիկ, բայց դու դժոխք հասկացիր. ման եմ գալիս մէկ-մենակ չոր և ցամաք փողոցներում. ոչ ոք չկայ, որ ինձ ասի «բարի լոյս», կամ «բարի երեկոյ»: Ազատ բոպէսներին նստում եմ ծովափին մի կտոր տախտակի կամ ապառաժ քարի վրայ, գլուխս առնում եմ յոգնած ձեռքերիս ափերի մէջ ու լուռ մտածում. իսկ ծովը գալիս է և իր ամբողջ յոյզերսով, շոյուններով նստում հոգուս մէջ...

Ա՛խ, անգին մայրիկ, այդ բոպէին, սրբան եմ ուզում սուզուել այդ ալիքների մէջ խորասուզուել ու անյետանալ ծովի յատակում:

Սակայն ծովը ինձ շատ հեռուն տարաւ: Այն ինչ ես ուզում էի գրել քեզ, թէ ինչ եմ անում ես այս սև քաղաքում:

Հէնց որ իջայ գնացքից, զգացի, որ իմ առաջ արդէն բացուել է մի հսկայական անդունդ և ես ինձ տեսայ այդ անդունդի յատակում: Չեղքս ցանկացայ գցել քարաժայռերին և մազըլցելով դուրս գալ այդ անդունդից, բայց շատ էր խորն այդ վիհը: Եւ իսկապէս, մայրիկ, այժմ ես իսկական անդունդումն եմ: Քո տուած մի քանի բուբլիները վաղուց են թռել գրպանիցս:

Անցեալ օրը մնացել էի քաղցած ու ինձ ու ինձ մտածում էի՝ ո՞ւմից խնդրեմ հաց, չէ՞ որ այս քաղաք կոչուած սոսկալի - անդունդում ինձ ոչ ոք հաց չէր տալ: Ի՞նչ պիտի անեմ, մուրամ, սի, ոչ, ոչ... և գնացի, նստեցի ծովափին. խոհեբը երկար շարքերով եկան ու բուն դրին մտքիս մէջ և ես՝ ինչպէս մի մանուկ հեկեկում էի քաղցից... երկար լաց կը լինէի, եթէ ինձ չմօտենային երկու ջահէլներ. ահ, նրանք շատ բարի էին. երբ իմացան թէ ինչո՞ւ են թափւում արցունքներս, իսկոյն ընկերական օգնութիւն հասցրին ինձ: Ես երախտապարտ մնացի նրանց:

### Բ. ՆԱՄԱԿ

#### Մայրիկ:

Երկու շաբաթը անցել է այնպէս արագ, ինչպէս վագոնի պատուհանի առաջով թռչող այն իրերը, որոնք ընկած են ճանապարհի կողքերին:

Որդու լաւ գործերը մօր համար ցնծութիւն են, իոկ վատը սրի հարուածներ. բայց այսօր ես, մայր իմ, կանգնած եմ վերջին ճանապարհի վրայ: Կեանքը ինքն թոյլ տուաւ կանգնել այդ սոսկումների առաջ: Անգին մայրիկ, մի անիծիր ինձ, մի նզովի իմ ծնած օրը... ես ուզում եմ ասել այն ինչ որ արել եմ, բայց լեզուս, ահ լեզուս կարկամւում է ու պապանձւում. բայց ոչ, մայր իմ, ես չեմ ուզում քեզնից գաղտնիք ունենալ. ես հիմա գող եմ, մայր իմ... Ո՛հ, մայրիկ, մի անիծիր որդուդ, որ այնքան մաքուր էր և անարատ: Ես անկարող էի մուրացկանութիւն անել, իսկ գործ ոչ ոք չէր տալիս ինձ. ախար չէ՞ որ բոլոր գործերն էլ բռնած են... Շատ էի սոված, ամբողջ երկու օր ոչինչ չէի կերել: Երեկոյեան երբ անցնում էի մի մութ փողոցով, տեսայ մի բաց դուռ: Ասի՝ մտնեմ բարի մարդիկ կը լինեն, ի՞նչ անէի, քաղցը շատ էր տանջում:

Մտայ ու տեսայ միջանցքում կախած էին վերարկուներ և բոլորն էլ թանգ արժէք. «միթէ սրանք պէտք է ապրեն այսպէս վերարկուների մէջ, կուշտ փորով, անհոգ, իսկ ես օրերով քաղցած», մտածեցի, մայրիկ ու վերցրի վերարկուներից մէկը ինչպէս սեփականութիւն հագայ և հեռացայ. մի առ ժամանակ դրա փողով ապրեցի, և այժմ այդ փողն էլ է վերջացել և ես վերըստին քաղցած եմ. մայր, մի անիծիր քո երբեմնի լաւ որդուն, որ այժմ կանգնած է այս աննախանձելի ճանապարհի վրայ... Չվըտանաս, չընկճուես, մայր իմ երբ իմանաս, որ այս դրութիւնից ինձ ազատելու համար յուսահատական քայլ արած լինիմ...

## Գ. ՆԱՄԱԿ

Մայրիկ, անգին մայրիկ...

Ամեն տեղ ինձ արդէն ճանաչում են, թերթերում գրել են, որ ես գող եմ... Դու գրել էիր, որ վերադառնամ տուն, բայց ինչպէս վերադառնամ, քանի որ մի կռակ անգամ չունեմ. նոյնիսկ եթէ ունենամ, մի՞թէ կարող եմ վերադառնալ. չէ՞ որ գիւղում շատերը իմացած կը լինեն, որ ես գող եմ, մի սոսկալի զըզուելի գող...

Ես քեզ յաճախ եմ տեսնում երազում. իսկ դու միշտ կանգնում ես առջևս և թքում երեսիս, սոսկալի նախատինքներ թափում գլխիս... Եւ երբ սկսում եմ լաց լինել, դու էլ հետս լաց ես լինում ու մէկ էլ յանկարծ ամպի նման մի մշուշ իջնում է վերևից, քեզ պարուրում իր մէջ և անյետանում: Այդ ժամանակ լաց եմ լինում բարձրաձայն և... արթնանում... Ո՛ր, մայր իմ անուշ, մի, մի անիծիր դժբաղդ որդուդ:

Ես շատ չեմ հեռանալ այն մտքից, որը արդէն որոշել եմ և հիմա ուզում եմ յայտնել քեզ. թէպէտ գիտեմ, որ իմ այդ որոշումով սուր սլաք եմ ցցելու մայրական սրտիդ մէջ... Սակայն մոռացիր, մոռացիր իմ պատճառած ալդ վերջին կսկիծն էլ. ուրեմն նախ քան որոշմանս մասին գրելը ես պէտք է յայտնեմ քեզ այդ սոսկալի դիտաւորութեանս պատճառները:

Առաջ ու առաջ, մայր իմ, պէտք է ասեմ, որ խիղճս ոտակալիօրէն տանջում է ինձ, երբ մտածում եմ. «Ես, որ խելօք էի, յարդուած և պատուաւոր, այժմ գող եմ, աւազակ, և ահա մայր իմ, ուր է որ խիղճս բարձրանում է մինչև կոկորդս և խեղդում է ինձ և ես այդ ըռպէին մտածում եմ միայն մի բանի... կեանքիս վերջ տալու մասին...

Առաջին պատճառն այդ է մայրիկ, որ մղում է ինձ այդ յուսահատական քայլն անելու. կայ և մի այլ պատճառ, որ անտանելի է... Ես աշխատել չեմ կարողանում, իսկ ապրելու համար անհրաժեշտ է աշխատել, այն ինչ ես զուրկ եմ այդ ընդունակութիւնից, երկար ժամանակ մի տեղ չեմ կարողանում նրստել, ուրեմն ինձ գործ չեն տալ և չեմ կարող հացս հայհայթել, ասել է պէտք է կամ մուրացկանութիւն անեմ կամ գողութիւն, երկու միջոցն էլ մահից վատթար և՛ ինձ համար, այո՛, և ինձ համար, և՛ մեր պատուաւոր ընտանիքի անուան համար:

Մայրիկ, այժմ դու կը հարցնես թէ ինչո՞ւ չեմ կարողանում աշխատել. իմ սիրտը, մայր, այժմ դարձել է քնքոյշ վար-

դի պսակ մի թեթև սօսափիւնից պոկւում է և վայր ընկնում... Անցեալ օրը ընդունուեցի մի գործարանում հաշուապահի պաշտօնով, բայց երբ եկաւ գործարանատէրը, նայեց ինձ և՛ «այ տղայ, այսօր ես ընդունուե՞լ» ասաց: Նրա՛ «այ տղայ» խօսքը սուր սլաքի պէս ծակեց սիրտս. չէ՞ որ ես գիւղացի գեաղայ չեմ, որ նա ինձ այդպէս է անուանում...:

Ինչևէ, ես շատ շեղուեցի ասելիքիցս...

Այժմ պէտք է ասեմ. որ կանգնած եմ կեանքի և մահուան ճանապարհի մէջ տեղում և ահա երկրորդ ճանապարհը ինձ անքան հրաշալի, սքանչելի է թւում, որ այլևս չեմ մտածում ընտանիքիս մասին, որը իմ ամբողջ հոգին է, մայրիկ, ես այլևս չեմ կարող ապրել, չեմ կարող շնչել այս աշխարհ կոչուած սոսկալի հիւրանոցում...

Գրում եմ այժմ, մայրիկ, իմ որոշումս. թէկուզ վերևից Աստուած վէր գայ և ասի. «հրաժարուիր այդ մտքից ես քեզ կտամ անհուն հարստութիւն», ես դարձեալ չեմ հրաժարուիլ... ախր չէ՞ որ ես գող եմ, և անընդունակ եմ պատուաւոր աշխատանքի, հետևապէս և չեմ կարող երևալ հասարակութեանը ամենքն էլ պէտք է սոսկան, զգուեն ինձանից, իսկ մահը աւելի լաւ է, քան արհամարհուած ապրելը, որովհետև առանց պատուի չարժէ ապրել...

Ուրեմն, մայր իմ, դու հասկացար, որ ես կանգնած եմ մահուան ճամբի վրայ և երբ դու ստանաս այս տողերս, ես արդէն վերջ տուած կը լինեմ անպատիւ ու ամօթալի կեանքիս:


Այժմ, մայր իմ, վերջին բարևս եմ ուղարկում քեզ և բոլոր հարազատներիս... էլ չեմ կարող շարունակել, մայր իմ, արցունքներս արդէն խեղդում են ինձ:

Մնաս բարով, մայր իմ... մը...նաս... բա...րով...

Թիֆլիս.

Ն. ՍԵՒԱԴԱ





## ՍՏ. ՊՇԻՖԸՇԵՒՍԿՈՒ

### ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սիրոյ արքայական փառքի մէջ հոգիս վերացած՝ երգում է.  
Օհ, դարնանային գիշեր, ներշնչումների և անդրաշխարհա-  
յին ձգտումների նուիրական գիշեր!

Քո աղամանդազարդ երկինքը տարածուել է աւազաններու  
ու լճերի վրայ, որտեղ քնաթաթախ եղեգնուտը օրօրում է յա-  
ւերժահարսերի թախծալի երգից, — դու սիրոյ մշուշով հիւսել ես  
դալարագեղ մարդերն ու սև բլրակները, մայրիներն ու անտառ-  
ներն, որտեղ շողշողում են ոչ երկրային հրաշալիքներ. ծաղկող  
ձարխոտերը դողում են բուռն կրքից, իսկ դարաւոր եղևիններն  
ու լաստենիներն, կարծես, օրհնութիւն մը մնջալով՝ տարածել են  
իրանց ցամաքած թաթերը՝ յափշտակութեամբ լսող, աղօթքի  
մէջ խորասուզուած և դէպի երկինք ձգտող՝ երկրի վրայ, որը  
երկնում է, որը տարփանքով է շնչում, որը բերկրում է սաեղծա-  
գործութեան նուիրական կրակով...

Յենիր ոսկեշող գլխիկդ իմ կրծքին, փաթաթիր բազուկ-  
ներդ իմ պարանոցին՝ ճերմակ վարդենուց հիւսած պսակի նման՝  
և լսիր, թէ ինչպէս իմ սիրտը աղօթում է Դեզ:

Դու ինձ համար խորհրդաւոր խոստումների, նախազգացում-  
ների և անմատչելի թռիչքների գիշեր ես, տարածութեան մէջ  
ցրուած և աստղերի շողիւնի հետ դէպի կեանքի յորձանուտը  
հոսող հնչունների գիշեր, լուսութեան գիշեր, որը ընդգրկում է  
Աստուծոն և նրանում հանգչում:

\* \* \*

Իմ հոգին թագաւորում է սիրոյ յաղթական ոյժի մէջ և  
երգում:

—Օհ, գարնանային օր, հերոսական ու փոթորկալի արշա-  
ւանքների, պայքարի ու յաղթութեան և գոռոզ տիրապետու-  
թեան օր!

Գարնան առաջին կանաչով ծածկուեցին դաշտերն ու մար-  
գագետինները...

Խնձորենիներն ու տանձենիները զուգուեցին ճերմակ ծա-  
ղիկներով, նման սպիտակափայլ հարսանեական զգեստի:

Ճառագայթների հեղեղի միջից ծագում է պայծառ օրը. ա-  
րևի ոսկեհուն սանրով յարդարում է նա աղմկող ուռենիների տե-  
րևները, ոսկու շիթերով գօտեպնդում է նա բլրակները, և ամ-  
բողջ տիեզերքում հնչում է նրա սիրոյ անուրջների, երջանկու-  
թեան անըմբռնելի խոստումների երգը, հնչում է նաև այն խը-  
րախճանքի, այն երիտասարդ սիրոյ երգը, որ կենդանի սիրոյ  
հուրհրատներ է առկայծում մարդկանց սրտերի մէջ, հոգին խը-  
ռովում է սիրոյ թևերին տալիս է արագաթռիչ արծուի թևերի  
ոյժն ու կորովը...

Պինդ հպուր իմ մատաղ կրծքին քո հրեշտակի գլխիկով,  
պարուրիր իմ վիրաւոր սիրտը քո մազերի ոսկեթել գանգուրնե-  
րով և լսիր իմ զգայուն սրտի հրճուանքը:

Դու ինձ համար պայծառ օրուայ բերկրալի աւետարբերն  
ես, և իմ թմրած հոգին արթնացրել ես, որպէսզի նա կազդուրուի  
և հասնի այնտեղ, որտեղ իմ հայեացքը չի կարողանալու հաս-  
նել...

Դու ինձ համար ճառագայթափայլ ծնունդ լոյսն ես, առա-  
ւօտեան աստղն ես, իմ մատաղ կեանքի փարթամ դարունն ես  
դու, նրա օրն ու գիշերը, ցանկութիւններիս ու տենչանքներիս  
իրագործումը և իդէալներիս ձգտումն ես դու...

Իմ հոգու միակ մանեակն ես դու, նրա անըմբռնելի երազի  
և իրականութեան միջի տատանումների հնչիւնն ես դու և վեր-  
ջապէս իմ հոգու աստուածուհին ես դու, որին ես միշտ ուղղել  
եմ իմ մաքուր ու անբիծ աղօթքներն ու մտորումները...

\* \* \*

Եւ հիմա հոգիս բերկրում է անդրերկրային երջանկութեամբ—ես երկինքը երկրի հետ կապեցի—այն բոլորի մէջ, ինչ որ ապրում է երկրի վրայ և ինչ որ շողշողում է երկնքում, ես ոսկեայ լարեր ձգեցի, և դ՛ո՛ւ, իմ միակ սէր, խփիր ինձ հետ միասին այդ յաւերժական տաւղի լարերին. թող բովանդակ աշխարհը երգէ մեր նուիրական սիրոյ ողջ երգը, որ ամեն բան է և որի մէջ է ամեն բան:

Անցնենք, աղաւնեակս, մեր գարնան օրուայ և գիշերուայ վրայով...

Պետրոս



## ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

### ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Ընդհանուր տեսութիւն մը)

Գրական համաշխարհականութիւնը, այսօր, կատարուած իրողութիւն մըն է քաղաքակիրթ և լուսաւոր ազգերու մտաւորական շարքերուն մէջ: Այդ իրողութիւնը այն աստիճան զարգացած է, և այնքան ընդհանրացած, որ անգամ փոքր ազգութիւնները զերծ չեն մնար այդ ընդհանուր հոսանքէն: Ազիկա անշուշտ բնական հետեանքն է գիտական, տնտեսական և ճարտարարուեստական այն միջազգայնութեան. որ իր անջնջելի կնիքը դրած է բոլոր ազգերու գրական ու գեղարուեստական ստեղծագործութիւններուն վրայ:

Տրամաբանական է ուրեմն մտածել թէ հայը՝ իբր մէկը քաղաքակիրթութեան առաջապահներէն, որոնք տիեզերական գաղափարներու դրօշակիրը հանդիսացած են պատմական դարերու արշալոյսէն ի վեր, անհաղորդ չէր կրնար մնալ նոյն այդ տիրական կեանքի ազդեցութիւններուն:

Գրականութիւնը իբր ամբողջութիւնը երկրի մը ժողովրդին մտքին արտադրութիւններուն հարազատօրէն կը հայելիացնէ տոհմին պատկերը: Հայ գրականութիւնը, հայ ցեղին հոգեկան կեանքին մէկ տունկը, փթթած է դանազան ազդեցութիւններու տակ. և ինչպէս ժողովրդի մը դարաւոր ֆիզիքական կազմը, որ աննման տարրերու խառնուրդ մըն է, նոյնպէս հայ գրականութիւնն ալ համասեռ վիճակ մը չի ներկայացներ: Այդ անհամասեռութիւնը կարճանացնէ պատմական այն բազմաթիւ փուլերը, (Ֆազիս) որոնց մէջ անցած է մեր գրականութիւնը դարերու ընթացքում թեակոխելու համար իր արդի շրջանին մէջ:

Հայ գրականութիւնը քաղաքական ու պատմական իրողութիւններու հետեանքով ծնունդ տուած է այն երկու խոշոր հատուածներուն, որոնք կը կոչուին թրքահայ և ռուսահայ: Եթէ կորովի ու խորազանին վերլուծումով մը հետեանք հայ գրականութեան շարժումին, հոն անհրաժեշտօրէն պիտի հանդիպենք օտար ասարներու, որոնք իրենց անգղեցութեան շրջանակը կընդլայնեն դարերու վրայ: Նոր հոսանքներու այդ ասպնջականութիւնը հրամայական պահանջ մըն է ամեն նոր գրականութեան համար, որ կուզէ համեստ դիրք մը գրաւել միջազգային գրականութեան փառաւոր պանթէոնին մէջ: Որոշ չափով պիտի հետեւի հռչակաւոր գլուխ գործոցներուն, ծանօթանալ արուեստի ու մտքի հսկայ արտագրութիւններուն, ներշնչուել նոր ու նշանաւոր հրաշակերտներով մինչև որ կարելի ըլլայ իր կարգին ըստեղծել նմանօրինակ գործեր:

Նմանողութիւնը ուրեմն այն միակ ճանապարհն է, որ կը դիւրացնէ մտքին վերելքը այն սանդխամերէն, ուսկից անցած է Լտիեզերական միտքը իր եղափոխական զարգացումի և կատարեալագործումի ընթացքում: Այսպէս էր, որ Հոռոմայեցիները նմանեցան Յոյներուն և կերտեցին գրականութիւն մը, որու բարձրակէտը կը կազմեն Դանտէն Վիրգիլ, Լէօպարդի, Լուկրէզիոս և այլն:

Արդի եւրոպական գրականութիւնն ալ դասականին (Класси́къ) գեղեցիկ դուստրն է, որու տաք և կենսազոր շունչով անխտիր կը խանդավարուին ու կողակորուին փոքր ազգերու գրագէտները:

Գաղափարներու և զգացումներու այս հաւիտենական շրջաբերութեան մէջ շատ անգամ նոյնիսկ չենք իմանար թէ ուսկից կը բխին անոնք, կամ որու ծնունդն են: Բայց թէկուզ այդ հասարակաց գաղափարները Ֆրանսական հանճարի արգասիքը ըլլան կամ անգլո-սակսօն ուղեղի ծնունդ միևնոյն է, իմաստուն գրագէտին պարտականութիւնն է չափաւոր կերպով իւրացնել զանոնք, ճոխացնել նոր և ինքնուրոյն տարրերով, ծաղկեցնելու համար իր ցեղին մտաւոր կեանքը:

Անշուշտ համամիտ չեմ անոնց, որոնք տարտամ և անխորհուրդ ազատամտութիւնով մը կուզեն ազգային գրականութիւնը ողողել օտար տարրերով, լայն բանալ անոր դռները օտար գրականութեան հոսանքներուն առջև, այլասեռել, մէկ խօսքով, ամեն ինչ որ ազգային հոգիին խորքը կը կազմէ ե ոչ ալ կարելի է ընդունել գաղափարը այն գրագէտներուն, որոնք տեսակ մը նեղմիտ մոլերանդութիւնով կամ ինքնաբաւ հաւակնութիւնով

կուզեն մի ինչ որ շինական սլարիսպներով շրջապատել տոհմա-  
յին գրականութիւնը և անաղօրտ սլահել զայն դարուս մտաւո-  
րական կերպարանափոխութիւններուն: Այլ լաւագոյնն է կը  
կարծեմ վերծանել մեծ հանճարներու արտագրութիւնները, մար-  
սել, գտել, քամել անոնց մէջին ինչ որ սննդարար է և շինիչ ու  
ներմուծել ազգային գրականութեան մէջ գեղեցիկ սլատշաճե-  
ցումով:

Գրականութիւնը ինչպէս և արուեստի բոլոր արտայայտու-  
թիւնները, կը գլեն, կանցնեն հայրենիքի սահմաններէն անտին.  
անոնք այսպէս ըսուած, ալ համաշխարհիկ են:

Մարդկային միտքը հոն է միայն, որ կը գտնէ իր մտաւոր  
ծարաւին յագուրդը:

Սովորական և առօրեայ կեանքի տափալուծութիւններուն մէջ,  
ուր կը սողայ մարդկային գոյութիւնը, կենսապայքարի այն յա-  
յաւիտենական և փոթորկալից մղձաւանջներուն մէջ, որոնք այն-  
քան զարհուրելիօրէն կուզան ճնշել մեր մտքին վրայ, սէ, որքան  
հրաշալի է վերանալ երբեմն գէպի արուեստի գեղեցիկ վերնա-  
գաւառները, կամ խորասուզուել մեծ գիրքերու ընթերցումին  
մէջ, ապրել մէկ խօսքով ինքնամոռացումի մեծ ու երջանիկ  
վայրկեանները:

Ֆիզիքական ու բնախօսական յօրինուածքներուն և պաշտօ-  
նավարութիւններուն նման, որոնք կը մեքենավարեն մարդկային  
էակը, հոգեկան կեանքի պահանջներն ալ բնութեամբ նոյն են  
ամեն մարդու մէջ. թէկուզ անոնք երբեմն տարբեր աստիճան-  
ներով ու ներուժգնութեամբ արտայայտուին: Պիտի թափացնել  
ուրեմն այդ արտայայտութիւններուն այնպիսի հսկայ հրաշա-  
կերտներու մէջ, որոնք կարողանան արթնցնել քո մէջ ի զօրու-  
թիւն քնացող լաւագոյն յատկութիւնները:

Կեանքը տեսակ մը եղերախաղ է, իրական դրամ մը, որու  
հանդիսատես ու թերակատար է միանգամա-ն մարդը: Պիտի  
կարդալ Շէքսպիրի մը դրամները գիտնալու համար թէ այն  
կիրքը, որ քու մէջ աստղազարդ գիշերուայ մարգարտեայ ցոլա-  
ցումն է կամ խաղաղ ծովումը ծփծփան ծածանումը, հոն Համ-  
լէտին մէջ, մըրկայոյզ և կատաղի ովկիանին ամեհի և լեռնա-  
նման ալիքներուն մեծաշարաչ դղրդիւնն է: Բնութեան մէկ շքեղ  
տեսարանին, մարդկային յիմարութիւններուն կամ սխրագործու-  
թիւններուն, երկնային լուսաւորներու կամ հանդարտ ծովումը  
վճիտ հայելիին առջև ապշահար կը մնանք ու կը հայինք սլահ  
մը, բայց Գէօթէներու, Նիցշեներու, Ֆլամմարեոններու մէջ պիտի  
կարդալ տիեզերքին ցոլացումը, ուր բանաստեղծին էութիւնը

կը նոյնանայ, կը խարնուի տիեզերքի իրերուն հետ, մերթ Ուղիմպոսներու մաքուր բարձունքներուն մէջ կը թևածի արևներուն և մոլորակներուն հետ կը խօսի, բնութեան հետ կը թըրթըռայ:

«Մարդը, կըսէ Թէն, անասունի և բանաստեղծի խորհուրդ մըն է»: Մարդը բնութենէն ընդոծին համակրութիւնով մը, կամ հետաքրքրութիւնով լիցուած է դէպի իր նմանին կեանքը. սկըզբէն անասունի պէս բան մըն է ան, որ իր անհատականութեան աստիճանական զարգացումով ընկերական և այլասէր էակ մը կը դառնայ, տեսակ մը լուսաւոր կենտրոն մը կամ ջերմութիւն մը, որի շուրջը կը ծաւալի, կը հետաքրքրուի մարդկային բովանդակ կեանքով և այդ անհրաժեշտ պահանջ մըն է զարգացած և բարձր անհատականութիւններու համար:

Exot sme-ի կամ համաշխարհականութեան երևոյթը ուրեմն նորածին գրականութեան մը մէջ բողբոջումի և ծլարձակումի նշան մըն է առանց որու բնատոհմիկ գրականութիւն մը կը մատնւի այսպէս ըսած, մտաւոր ներքինացումի մը ու գրկուած օտար տարրերու բեղմնաւորիչ ազդեցութենէն, շատ չանցած կը խամրի կը դժգունի: Պիտի ըլլալ իր միջավայրի և ժամանակի հարազատ արտայայտութիւնը, գրել իր վրայ իր դարուն և ցեղին դրոշմը. բայց և միևնոյն ատեն պիտի ճոխացնել զայն առողջ և գեղեցիկ տարրերով:

Արդի մտքին ձգտումն է ճանչնալ, ուսումնասիրել մարդը իր դասակարգային բոլոր շերտաւորումներուն մէջ, վերին թէ ստորին: Ընկերաբանութիւնը կուգայ մեզի սորվեցնելու թէ մայրաքաղաքներու կամ high-life-ի մարդը չէ միայն, որ կը դարձնէ ազգերու պատմութեան անիւը, այլ հոծ բազմութիւններն ալ, մասսան, կամ ամբոխը, որոնց վրայ կը թնամ է բոլոր տէրութիւններու վարչային մեքենան, ուրեմն հարկ է ծանօթանալ ժողովուրդներու հոգեբանութեան, անոնց պատմական և ընկերաբանական (կրօնական, քաղաքական, բարոյական և մտաւոր) երևոյթներուն. ահա թէ ինչու այլամերժ գրականութիւն մը բաւական չէ գոհացնելու այն նոր պահանջները, զորս կեանքը դըրած է այսօր մեր առջև:

Հայ գրականութիւնը (Ռուսահայ և Թուրքահայ) սրդարև սկսած է վաղուց թևակոխել գրական համաշխարհականութեան իր փուլին մէջ: Թէև հայ միտքը տակաւին բոլորովին դուրս չէ եկած իր նմանողութեան շրջանէն, բայց անաչար քննադատութիւնը, յանձին օտար հայագէտներու կուգայ վկայել, որ հայ

գրականութիւնը ի դէմս իր մտքի նշանաւոր վարպետներուն և շնորհիւ ճոխ ու ճկուն լեզուի մը, արժանի է պատուաւոր տեղ մը գրաւելու համաշխարհային գրականութեան հոյակապ տաճարին մէջ:

Սուգի և դժբախտութեան այս մեր օրերուն, այնպիսի ատեն մը, երբ ամբողջ ազգերու, մանաւանդ մերինին պէս փոքր ազգերու գոյութեան, լինելու կամ չլինելու հարց է մէջ տեղ դրուած, այս մեր գերագոյն դժբախտութեան վայրկեաններուն, այո՛, այս անտեսուած բայց անժխտելի ճշմարտութիւնն է, որ կուգան ազդարարելու մեզ արեւմուտքէն, նոր-աշխարհէն թէ հիւսիսէն, օտար մտքին լաւագոյն ներկայացուցիչները:

Գրական շարք մը սեռեր սկսան ունենալ արդէն իրենց ուրոյն կալուածները. ասոնց-մէ շատ էր ողջունեցին իրենց հեղինակաւոր վարպետները: Մեր բանաստեղծը Վարուժանն է կամ Սիամանթօն, մեր պատմագէտը—Լէօն, մեր Զօլան՝ Զօհրապն է, մեր քննադատը—Յարութիւնեանը կամ Զօպանեանը, մեր հէքիաթագիրը՝ Զարդարեանը, մեր Նիցչէն՝ Իսահակեանը, մեր Լիտրէն՝ Եղիան, մեր ընկերաբանը՝ Վարանդեանը կամ Ֆրանգեանը, մեր թատերագիրը՝ Շիրվանզադէն կամ Շանթը, մեր Պրէսանսէն՝ Պարթևեանը, մեր Մոլիէրը՝ Պարոնեան և Օտեան, մեր Վէրլէնը՝ Նարեկացին, մեր աշուղը՝ Նահապետ Գուչակը և Սայաթ-Նովան, մեր բնագանցը՝ (Метафизикъ) Մրմրեանը, մեր Բոսուէն՝ Մուշեղ ու Մեսրոպ (Հարմակ) եպիսկոպոսները \*):

Ունեցած ենք տակաւին ուրիշ շարք մը գրագէտներ, արուեստագէտներ և այլն, որոնք փայլած են հայ գրականութեան համաստեղութեան մէջ, բայց անոնց մէ շատ քիչերուն մէջ կը գտնիս այն համաշխարհիկ թռիչքն, որ յատուկ է զարգացած և ճոխ գրականութիւններու: Միւս կողմէ ունինք նաև խումբ մը նոր գրողներու,—և ասոնց թիւը շատ է—որոնց գործերուն մէջ միահեծան կը յածի սնամէջ դատարկաբանութիւնը: Ինձի այնպէս կը թւի թէ ասիկա հետևանք է մտքի այն ընդհանուր աղքատութեան, որը անհրաժեշտօրէն կանդրադառնայ հայ գրողներու արտագրութիւններուն վրայ: Ինչ հրաշալի են Բուրժէ մը, Գէօթէ մը, Տօլստոյ մը, Սենկեիշ մը, Ֆլամմարիօն մը, կամ Շանթ մը և ուրիշ շարք մը նշանաւոր հեղինակներ, որոնք անգամ իրենց վիպական կամ բանաստեղծական մարզերուն մէջ,

\*) Մ ԼՆՕԹ. Հեղ. — Սոյն մերձաւոր և հակիրճ գուգակչիւրը հարկ է եպիսթի ընել մասնաւորաբար անոր համար որ ուղեցի ազ-նքախ դարձնել այն համաշխարհիկ գոյնը և խնամական կապը. որոնք գոյութիւն ունին արգարե մեր և Եւրոպական գրականութիւններու միջև:


չատ յաճախ դուրս կը գան չոր ու ցամաք վիպասանութեան մը  
 նեղ շրջանակէն և կը շօշափեն մարդկային հոգեբանութեան, ի-  
 մաստասիրութեան կամ տիեզերագիտութեան մեծ առեղծուած-  
 ներ. դա ի հարկէ մտքի այն հարուստ վիճակին և ընդհանրաց-  
 նելու այն հուժկու կարողութեան, որոնցմով օժտուած գործերը  
 կը դադրեն ալ միակ ազգի մը սեպականութիւնը ըլլալ է, անոնք  
 ամբողջ մարդկութեանն են, և համաշխարհիկ գործեր կը մնան  
 միշտ: Այս իսկ իրողութեան անգամ մընալ կուգանք հաստատե-  
 լու օտար ազդեցութեան երևոյթը, որը անգամ մեծ գրականու-  
 թիւններու մէջ կը նշմարուի անընդհատ:

Հայ գրականութեան մէջ, այդ ազդեցութիւնը՝ սլատմական,  
 աշխարհագրական ու քաղաքական այլ և այլ գործոններու հե-  
 տեանքով կարելի է վերածել երկու գլխաւոր և հակամարտ ըս-  
 կըզբունքներու՝ Արեւմտեանն եւ Արեւելեանն, որոնք սակայն ժա-  
 մանակի ընթացքում կը համադրուին ու կը հալուին այսպէս ը-  
 սուած հայ ստեղծագործ մտքի քուրային մէջ, կը կազմին գեղե-  
 ցիկ ներդաշնակութիւն մը, և ծնունդ կուտան շքեղ և լուրջ գրա-  
 կանութեան մը, որպիսին է մերը: Ոչ արևելքի մեղկութիւ-  
 նը կը տեսնես հոն և կամ հարաւի տուփանքը և ոչ  
 արևմուտքի վիթխարի շունչը: Այստեղ անշուշտ կարելի չէ յի-  
 շատակել այդ ազդեցութեանց ծագումը և պարագաները իրենց  
 մանրամասնութիւններուն մէջ, որովհետեւ բանասիրական երկար  
 հետազօտութեան մը գործ է ատիկա. միայն կը բաւականանամ  
 հաստատելով այդ իրողութիւնը: Կարժէ սակայն մատնանշել այն  
 եզակի և գերակշիռ ներգործութիւնը զոր ունեցած է արևմտեան  
 գրականութիւնը մերինին վրայ: Ֆրանսական գրականութիւնը  
 իր տիեզերական դրօշմը ձգած է ոչ միայն մեր, այլ անգամ ու-  
 ըրիշ առաջնակարգ ազգերու գրականութիւններուն վրայ. այդ  
 ազդեցութիւնը կը շեշտուի մանաւանդ թրքահայ ստեղծագոր-  
 ծութիւններուն մէջ և այդ աղէտաբեր ու վատ չէ եղած մեզ հա-  
 մար, ինչպէս կը կարծեն յաճախ մեր գրողներէն շատերը. մաս-  
 նաւորաբար մեր ռուսահայ եղբայրներէն ոմանք. ընդհակառակը  
 այդ ազդեցութեան կը պարտինք լիզուի ու ոճի այն կրկնակի  
 առաւելութիւնները, որոնցմով օժտուած է թրքահայ գրակա-  
 նութիւնը: Միւս կողմէ անգլօսակսօն և հիւսիսի գրականութիւնն  
 ալ իր լուրջ և հիւթեղ գործերով եկած է վառ գոյն մը բերելու  
 մեր գրականութեան: Բայց այնպիսի վայրկեանի մը մէջ, երբ  
 թուրքահայ գրականութիւնը ազատուած երկարամեայ թմրու-  
 թենէ մը սկսած էր ուրուագծել համաշխարհիկ գրականութեան  
 վսեմ ժէստեր բարբարոսները փութացին իջեցնելու իրենց ան-

գութ և ծանր հարուածը մեր ազգային մարմինին ամէնէն կենսափափախ երակներուն. և անաղ հայ գրականութեան Ռահւիրանները աքսորի և կախաղաններու Գողգոթային վրայ դադրեցան երգելէ իրենց վեհ երգերը:

Ռուսահայ գրականութիւնը որբացաւ իր հարազատ քոյրէն. հազիւ թէ եղան քանի մը գրագէտներ, որոնք կրցան ճողոպրել շարագուշակ հարուածէն ու թէև բարեբախտաբար ունինք տակաւին շարք մը գրողներ, կարծես խորհրդաւոր պահեստներ ըլլային կարմիր և զարհուրելի օրերու, բայց կրկին երկար, շատ տարիներ պէտք են վերսկսելու համար այն կենդանի ստեղծագործութեան մեծ և ոգևորող թափը, որը նոյնիսկ օտարներու հիացումը կը շարժէր: Չյուսահատնւինք սակայն թոյլ չտանք, որ յոռետեսութեան մռայլ ամպերը գան մթապնել մեր յոյսերուն արդէն իսկ սև երկինքը. մաղթենք, որ հայ միտքը և քնարը վերըստին երգեն իրենց երգը ազատութեան և վերածնութեան երգերը Բոսփորի ափերուն վրայ, և վերջապէս ջանանք ապացուցանել Քիեյարներու, Ժօրէսներու և Բրիւսովներու կողմէ քանիցս կրկնուած ճշմարտութիւնը, թէ ազգ մը, որ իր գրականութեամբ ազնւութեան վկայական է ստացեր, այդպիսի ազգ մը, երբէք չի մնոնիր:

ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԵԱՆ





ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԻ ԳԻՆՆ Է 60 Կ.

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎԷ 70 Կ.

«Արշալույս»-ի բաժանորդագիրն է տարեկան 4 ռ. կէս  
տարուանը 2--50 Կ. Արտասահման՝ տարեկան 5 ռ. կէս տարուա-  
նը 3 ռ.

Հասցէն՝ Тифлисъ, редакция журнала „Аршалуйсъ“ отдѣле-  
ніе 5, почтовый ящикъ № 5



